գործք և աստուածասերք եղիցուք. և ինքն-
իշխանութեանն կառօք իրը՝ ՚ի տեսարանի
ումեք՝ ՚ի սոսա նահատակել հանգիսացուք,
ինքելով որպէս թագաւորական մատանեաւ
Աստուածայինն երկիւղիւ՝ զսիրտս և զձեռս,
ընդ որս յարմարեալ պատկանի խորհուրդ-
և զործ. զի՞նոքումքը իրօք՝ որովք առ մահն

սողոսիեալ անկաք , առ կեանսն դառնալ
վերստին գիտիցեմք : Անդ :

Որ առ պատուիրանադրեալն ո՛չ ձգտի հա-
սանել կանոն , նա յահեկակողմանն դանդա-
չէ խոտորեալ ճանապարհի . իսկ որ յառա-
ւելազանցն նկրտի հրամայեցելոցն հասա-
նել , զաջակողման այնպիսին տենչացաւ գը-
տանել զխոտորումնն : Ոինն յանդկնաբար
յապաշխարութեանն հոսելով վտանգս՝ յա-
ռաւել սինդութենեն յանյուսութեան ըն-
կըղմի խորս . և միւսն անչափաբար ընդար-
ձակեալ թողութեանն յուսով՝ զբովանդակ
զերկիւղին 'ի բաց լուծանե զկաալ : Իսկ որ
յերկաքանչիւրոցն զանգիտեալ հրաժարիցէ
ծայրայեղ խոտորմանց՝ միջին իմն արդա-
բակ , և անստերիւրող ճանապարհաւ բերի-
ցին . յորմէ ո՛չ փոփոխեսցի 'Կախահարցն
հաստատեալ սահմանք . այսինքն ո՛չ չերու-
նականն աւուր զապաշխարութեանն 'ի վե-
րայ ածել զնսիր , և ո՛չ նմանօրէն սմա՝ զծո-
մականսն դատարկացուցանել , և փափկա-
ցուցանել զաւուրս . և ո՛չ դարձեալ՝ յառ-
գերազանցագոյնսն սոցա ումեք վերանալ
ելանել , որպէս թէ՝ ընդ անգործութիւն
և ընդ բերանալուծութիւն խառնել և զքը-
նոյն խորութիւն , և զգինեճանութեանն
որովայնամոլութիւն . իսկ 'ի տրտմականսն
ծանրաբեռնութեանն 'ի ներքոյ դնանիլ տը-
կար բնութեանս , մարմնասպան լինելով
յաւէտ՝ քան թէ ախտասպան . և 'ի կքել
մարմնոյն՝ գտանել հոգւոյն զվշատութեանն
տարակուսանս : Անդ :

Են ոմանք 'ի նոցանե՛ , որք զաքացն զհետ
 երթեալ՝ խաբեցան . որ ինչ միանգամ 'ի
 տարերցդ յերկնե՛ և յերկը գեղեցիկ ինչ
 առ երեսս հանդիպաւ՝ Աստուածս անուա-
 նեցին , զաստեղս , զլերինս , զրլուրս , ըդ-
 ծառս , զքարինս : Եւ են դարձեալ՝ որք
 յուժգնութենե՛ կենդանեաց , կամ 'ի դըժ-
 նե՛ութենե՛ երկուցեալք և ահաբեկեալք՝
 'ի պաշտօն նոցին դարձան , և Աստուածս ան-
 ուանեցին . որպէս առ Քարելոնացին Ա ի-
 շապն պատուեցաւ . առ Եղիպտացին Արո-
 կողիլուպքն : Խոկ որք անչափաբար գիջական
 ախտին հոգ տարան , զարական և զիգական
 անդամն նոյնաձեաբար ստեղծեալ՝ պաշտե-
 ցին : Ովվաբացիքն և Ախոնացիքն զՔա-
 մալմն , և զԱստարտոն : Այլք դարձեալ՝
 զօդտակարս և զպիտանիս 'ի տարերաց այ-
 տի առ կենցազական պէտս ընտրեալ՝ աստ-
 ուածացուցին . որպէս Պարսիկք և Արք
 զհուր , և զջուր , և զերկիր . մինչ թէ հա-
 նոյ թուեցաւ նոցա՝ 'ի մեռանելն զմարմինս
 իւրեանց գազանաց և թունոց ծախել տալ ,
 քան թէ ընդ երկրաւ ծածկել , և նեխու-
 թեամբն անպատուել զյիմարաբար պատ-
 ուեալն : Են ոմանք 'ի նոցանե՛ որոց տե-
 սեալ զարիւնաբուս , և զթարախածուծս 'ի
 կենդանեացդ՝ իրեւ զախտաբոյժս և զցա-
 ւահալածս մեծարեալ զնոսա՝ Աստուածս
 անուանեցին . որպէս Պազացիքն և Կկա-
 րոնացիք զտղրուկս , և զճանճս , և զմժիխու-
 կէսք 'ի նոցանե՛ զընդդիմամբատս այլոց
 կենդանեաց զկենդանիս 'ի սլատիւ առեալ

սլաշտեցին . որոց յաղթահարելն զմիմեանս՝
օդնականութեան սպասաւորութիւն առնել
է իւրեանց ստացողաց . որպէս Հիւսիսայ-
ինք՝ զձի , և զշուն . զմին վասն երագաշար-
ժութեան՝ ոտիւքն որպէս թեռվլք թռչել
հեծելոյն զկնի որոյ հասանելն բաղձայ . և
զմիւսն՝ 'ի գազանայն յափշտակութենէ ըդ-
տեր իւր յապահովուցուցանելոյն սակո : Եւ
կամ որպէս առ նոսին իսկ՝ զորոց բանս ,
կատուապաշտութիւն է մեծարգի եղեալ՝
կերակուր իւրեանց զկերակրոցն ապականիւս
առնելոյ աղագտու : Ի՞այց ամպարշտագոյն
գեր զասացեալսս՝ այս էր հեթանոսակա-
նացն . ինքն անձին իւրում երկրպագու և
պաշտօնատար լեալ . զի որ առ ընկերսն մո-
լորեցաւ Իստուածութեան կարծեօք , ինքն
իւր ինքեան խոնարհեալ՝ երկրպագէ յիմա-
րաբար : 'Ի համեմատութիւն դալով առ մի-
մեանս մարդիկն՝ որով իւիք նուազեալ գտա-
նեին առ ընկերն , նորին պատճառաւ յա-
րազութեան աստիճանի զգերազանցեալն
հանեալ դներ . և խելագարեալ՝ զինքն արա-
բած խոստովանիւր լինել : Իստ այսմ օրի-
նակի Ի՞աղդէացւոցն տեսեալ՝ զիտանեանն
զայն վիթխարի և աշխոյժ՝ վաթմնականդ-
նեան գոլով ըստ երկայնութեան հասա-
կին , իսկ լայնութեամբն վեցաքանակս ու-
նելով կանգունս . վասն որոյ զգերամբար-
ձեալն մարմնոյն տրամադրութեամբ՝ աստ-
ուածօրէն իմն պատուով պատուեցին : Եւ
սորա խաւար չարապաշտութեամն զբոլոր
տիեզերս ընդ իւրեւ կալեալ՝ կուրացոյց ,

ըստ իւրաքանչիւր լեզուաց այլաձեւլով ըդ-
 նորա զանուն . Վուշացիք՝ Եթրովմթ կոչե-
 լով, Բաբելացիք՝ Ռէլ, Փղշտացիք՝ Բա-
 հաղ, Ելլենացիք՝ Դիոս, Պարսիկք՝ Արմզդ,
 Հայք՝ Արամազդ : Եւ զորօրինակ սորա
 ընդ բարձրութիւն հասակին հիացեալք խա-
 բեցան, վասն այլոց այլով իւիք քաջահա-
 ճութեանցն պատահմանց ՚ի զարմացումն ե-
 կեալք՝ Աստուածս անուանեցին . զլունոս՝
 վասն յոխորտաբար առ կոռւարարութիւնս
 յարձակելոյ, զլուես՝ վասն արին գոլոյ,
 զներմէս՝ վասն քաջախօսնակ ճուռմարա-
 նութեանն, զլուես՝ վասն անընդդիմամարտ
 ներհակացն զուգախտոնութե : Օ այլս վասն
 այլ իրիք քաջաբաստիկ զբնականսն ունելոյ
 որակութիւնս . յորոց անուն և զկուռս պատ-
 կերակերպս քանդակեալք՝ Աստուածս ան-
 ուանեցին : Եւ վասն զի յաղծապղծից անուն
 և ՚ի վատթարագործաց կուռքն կանգնեալ
 լինեին՝ դեն չարասէր և ճշմարտատեաց՝ ՚ի
 ներքս մտեալ դարաներ, և զկուապաշտիցն
 ընդ ձեռն երևելի անդրեացն առ ինքն ձը-
 գեալ՝ ընդուներ զերկրպագութիւն : Զօր-
 մէ դտանեին՝ եղեալ դիցն երկրպագուք,
 ոչ միայն տարրապաշտք, այլև դիւապաշտք .
 առնլով՝ ինոցանե դիւացն պաշտօն, և տա-
 լով զինքեանս փոխարէն ընդ ծառայու-
 թեսնն : Ա ասն որոյ դիւաքնակք և դիւա-
 շունչք կռոցն լինեին սպասաւորք, այլ և
 Դիւցաղունք անուանեալ՝ դեր ՚ի վերոյ
 մարդկայնոյս համբառնային ընութեան :
 Ճառ ընդդէմ Պաւլինուց :

Հիացեալ եմ մեծապէս՝ զնորանշանդ՝ 'ի քեզ տեսանելով ձեւացութիւն. զի այլք յա-
հեկանացն զմի մի ինչ՝ ի սատանայական ուս-
մանցն բարձեալ տարան շահս. իսկ դու յոյժ-
ագահելով՝ և ոչ զմի ոք անտուստ՝ ի կողմա-
նե թողլով՝ տենչացար. մինչ թե զնոյն
զլարգարեին առ քեզ բարբառել՝ իրաւա-
ցի է. Ամբարձ զաքս քո յուղղութիւն, և
տես՝ ուր ոչ թաթաւեցար՝ ի ճանապարհս
քո, և որ 'ի կարգին. առ ամենեսեան ա-
նամօթեալդ՝ և 'ի խոստովանականս, և 'ի
կարգս, և 'ի կրօնս. առանց ամենեցուն հո-
լանեալ, և զամենեցուն 'ի տեղի արարեալ՝
լցեր զհայհոյութեանն չափ : Գայ հնար
թուել զխիձս հեղեղատի, և զաւազ ծո-
վու, և զշիթս անձրեի, և ոչ զստեղծեալն
առ 'ի քեն նորսոդիւտ բանս և իրս : Ինդ
հակառակս ելանել Աստուածայնոյն խոր-
հեցար գրոյ. Լցցի՞ ասէ, երկիր գիտու-
թեամբ Տեառն իբրև զջաւըս բազումն՝ որ
ծածկեն զծովս. սյսանսակ և դու հրապու-
րողականդ քո բանիւք ծովացուցեր. ամե-
նայն օր, և ժամ, և ամիս՝ քեզ նորաձեռու-
թեան : Ճառ ընդունէ Երեսութականաց եք. 70 :

ԶԱՔԱՐԻԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ZACHARIAS PATRIARCH.

in the ninth Century.

Ա երագրէ սրբազան և երջանիկն կու-
կաս 'ի հրամանե սուրբ Հոգւոյն. և եղեւ
ասէ, ընդ աւուրսն ընդ այնոսիկ՝ եւ հրա-

ման յլուգոստոս կայսերէ՝ աշխարհագիր
առնելընդ ամենայն տիեզերս : Հառաջա-
դոյն քան զծնանելն 'ի Ռեթղեհէմ' տայ-
զերկրաւոր պետութիւնս 'ի Հռովմայեցիս,
որ չորրորդ գաղանն անուանեալ 'ի Դա-
նիելը մարդարեէ . քանզի 'ի Հռովմ հան-
դերձեալ էր կարգել զաթոռն Պետրոսի և
Պաւղոսի . և զգլխաւորութիւն սրբոյ Երկե-
ղեցւոյ . և զհռովմայեցւոց թագաւորու-
թիւնն կոչելոց էր 'ի հաւատս՝ լինել գա-
ւաղան Վրիստոսական դաւանութեամնն 'ի
վերայ դիմումարտիցն խաչին Վրիստոսի :
Ճառ ծննդեան Վրիստոսի :

Կշանք և արուեստք հրաշափառ և գե-
րազանցք ներդործեալ զարհուրեցուցանեն
զմարդիկ : Վանզի լինի և այլազգ նշանք՝
որպէս 'ի կախարդաց , սուտք , և խարե-
րայ , պատիբք , 'ի դիւաց կեղծաւորութե-
նէ՝ ոչինչ ումեք յօգուտ դործեն . որպէս
Յանեսն և Համբէսն յայնժամ՝ որ զհար-
ուածոն Առվակէսի երկրորդէին , այլ փարա-
տել ոչ կարէին : Լոյնպէս և ամենայն կա-
խարդք առաջի թերահաւատիցն նշանս կա-
տարեն . նաև Ակմոն կախարդն ոչխար լի-
նէր , և գայլ . և զխիճս հեղեղատին իբրեւ
զշունս կերպարանեալ հաջեցուցաներ . և
սպատկերաց դիցն խօսել տայր , և զլերինս
փոփոխել երեւեցուցաներ . և այն ոչ ումեք
'ի մարդկանէ օգուտ լիներ : Վրար և մեծն
Առվակէս նշանս և արուեստս հրամանաւն
Վատուծոյ՝ Խարայէլի 'ի փրկութիւն , և 'ի
դատապարտութիւն Եղիսլոտոսի : Վրար և

Եղիա նշանս 'ի Արքմելոս լեռինն' 'ի հաս-
տատութիւն հաւատոյ , և 'ի կործանումն
Բահաղու , և ամօթոյ Արքարեթիցն : Խակ
Տեառն մերոյ Հախուսի Վրիստոսի աստ-
ուածահրաշ և պքանչելի հրաշքն՝ գերահրաշ
և պքանչելափառ , և 'ի վեր քան զմարդոյ
ներգործութիւն . որ միայն աստուածային
և ամենակալ զօրութեանն վայել էր . որ
ու ումեք 'ի մարդկանէ 'ի կորուստ , կամ 'ի
վնաս , կամ 'ի դատապարտութիւն ներգոր-
ծեցան , այլ՝ ամենայն մարդոյ յօդուտ և 'ի
փրկութիւն կատարեցան : **Ճ**ամ Գալութեան
Փրկչին , Երբասառնէ :

ՅՈՎԱՆՆԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ, JOHN PATRIARCH.

in the tenth Century.

Ըմենեքեան սոքա զբոլոր աշխարհաց
գիւտս ծննդոց՝ յերից որդւոց Վոյի ասեն
սերեալք , և աճեցեալք , և գոյացեալք , և
ցան և ցիր սիռեալք ընդ երեսս երկրի . զի
թէ և զանուանս Հարցն Արտաքինքն տար-
որոշս 'ի մէնջ տան՝ որպէս Վսիւսիւթըս
զԼոյ անուանելով , և Վսերքսէս զԱմ ,
սակայն պայազատութեան զրոյցս 'ի մի տա-
րեալ բովանդակեն . և այսպէս երկաքան-
չիւր սոքա աւանդեն մեզ կարգ բանի , թէ
'ի գալ , հանդիպել , ժամանել դարուն երկ-
րորդի՝ հեղեղեալ , ողողեալ , ներսուղեալ
ջնջեաց Տէր՝ սպառապուռ մաքրելով զերեսս
երկրի 'ի մոլելոցն , և յամպարշտելոցն , և

յանօրինելոցն , և 'ի վայրագ շամբշեալ շաղ-
զակերաց , և 'ի կռամնլ մարդոց չարտգու-
նից . մինչ ոչ ևս մնալ 'ի բոլոր բանակա-
նացս , կամ անբանից . բայց միայն 'ի տոհ-
մից արդարոցն՝ (որք) հնազանդեալք եղեն
'ի գործ արկղակերտի Եղեան Տաղանին և
Պարմագը :

Կայսեր Աօրկայ ձեռներիցութեամբ իմն
փոփոխումն արարեալ անուան աշխարհացն
այնոցիկ՝ որ 'ի մերոյն Արամայ կարդաւ ե-
ղեալ էր : Եւ նախ զԱրմենին զայն՝ որ
Առաջին Հայք անուանիւր , Երկրորդ Հայք
զնա Աօրիկ կոչեաց . յորում մայրաքաղաք
է Աւաստիայ : Իսկ զԼիապարովկիայ՝ յորում
մայրաքաղաք է Աւաստիայ , և Երկրորդ
Հայք նախ անուանիւր՝ կոչէ զնա Երրորդ
Հայք . և առնե զնա Եպարքի : Իսկ զԱ-
լիակինէ՝ որ ունի զՀամանուն իւր գաւառս ,
և և Երրորդ Հայք՝ կոչէ զնա Առաջին
Հայք : Իսկ զՊոնտոս՝ յորում մայրաքաղաք
է Տրապիզոն՝ կոչէ զնա մասն Աեծ Հայոց :
Եւ զՉորրորդն կոչեալ Հայք՝ յորում մայ-
րաքաղաք Արտիքոսացպոլիս , այսինքն՝
Եփրկերտ . Յուստիանունիստ : Դարձեալ
զաշխարհն Աարնայ՝ յորում մայրաքաղաք է
Յնեոդոսուպոլիս , անուաննէ զնա մեծ մասն
մեծ Հայոց : Որ և 'ի մեծն Հայոց մասն
ինչ մնացեալ էր 'ի ձեռս Հռովմայեցւոց՝
կողմանց անտի Բասենոյ մինչև 'ի սահ-
մանս Ասորեստանի , Աեծ Հայք զնա կո-
չէ : Իսկ զկողմանս Տայոց սահմանոք իւրովք
հանդերձ՝ խորագոյն Հայք անուաննէ : Եւ

զկողմն՝ Կավին քաղաքին՝ ներքսագոյն հայք:
Այսպէս ամենեցուն սոցա փոփոխումն ա-
րարեալ Աօրկայ՝ գրե՛ ՚ի Կախանս արքու-
նի : Անդ :

Հաջորդէ՛ զաթոռն սուրբ՝ ԱԵԾ Խմաս-
տասէրն Հոհաննէս . որ հմուտ և տեղեակ
գոլով բոլոր քերթողական շարագծաց մա-
սանց բանի , և մասնականաց , այլև վարժից
սեռից , և որք ընդ գոյացութեամբ են սե-
ռական տեսակարարութիւնք՝ մինչև ցանհատ
վայր , և տարբերութեանցն ևս հանգամա-
նաց , և պատահմանց անջատից և անսանջա-
տից . դարձեալ՝ և կրթական վարժից թեռ-
նականաց՝ որ զարուեստին ծառոյ պտուղս
առողանապէս ներադրէ յարուեստակէրն .
յաւէտ իմն հմուագոյնս գրով գրոշմեալ՝ տայ
եկեղեցւոյ Վրիստոսի զբովանդակ կար-
դաւորութիւնս պաշտաման ժամնուց՝ գեղե-
ցիկ իմն յօրինուածով Ճոխացուցեալ , և բա-
ցայայտեալ ևս զմիոյ միոյ կարգացն զմեկ-
նութիւնս ՚ի միիթարութիւն գղերց եկե-
ղեցւոյ . այլև ճառս ևս ինքնախօսս բանաս-
տեղծս յարդարեալ՝ զդացուցիչս չարագոր-
ծաց , և յորդորականս՝ ՚ի պէտս ապաշխա-
րողականս սակի : Աա ամենայն առաքինի
քաջողջութեան զանձն տուեալ աշխատա-
սիրաբար՝ կրթական ջանիւ զինքն զինէր
յերգս հոգեորս , պահօք և աղօթիւք , և
ամենագիշեր տքնութեամբ : Այւ ՚ի ներքոյ՝
ոչյօդեաց ասր , այլ յայծեաց ցփսիս դժոխ-
ըմբերս զգեստաւորէր . իսկ զարտաքոյն
՚ի պատուական երանգէ նիւթոց զգեստա-

ւորեալ պՃ՞նազարդեր . և ոսկի մանը խար-
 տիւ աղացեալ , և իւղովք անուշիւք յայն
 ընդխառնեալ՝ փչեր ընդ ծաղկեալ ալեօք
 մօրուսն՝ որ իջաններ մինչեւ ցգրապանս ըզ-
 դեստու նորա : Եշտ այնպէս ապա ատեան
 կազմեալ՝ զի տեսողացն բարեխորհաց բարի
 պատճառք խրախութեան լիցի , և չարացն
 խակաց ընդոստուցանող պակուցումն՝ ի չա-
 րեն՝ ի բարի : Եշտ վասն զի ոչ այնպէս յան-
 երեւութից ոմանց ահից զօրութիւն ընդոս-
 տուցանող մարդկան բերցի՝ ի վատթարեն
 առ լաւն , որպէս յերեւելեացս գերաբուն
 զարդուց խտաղանք . և վասն սորին իսկ այ-
 սորիկ կալաւ սովորութիւն գեղեցիկ զար-
 դուք պՃ՞նազգեստեալ զանցունչ քարինս ե-
 կեղեցւոյ . ապա ո՞րչափ առաւել մարդ քան
 զքարինս բերե՝ ի զարմացումն զտեսողսն :
 Այսկայն այսոքիկ ոչ ամենեցուն , այլ նոցա
 միայն՝ որոց դատողական հաւատացեալ է
 գործ : Եշտ վասն զի տեսեալ էր զայրն Աս-
 տուծոյ Աստիկան ոմն Հայոց Ա իլթ անուն ,
 և եղեւ նմա զնալ առ Ա միրապետն , և պատ-
 մէր նմա զվայելցութիւնն Հովհաննու : Իսկ
 նորա զնա տեսանել ըղձացեալ՝ վաղվաղա-
 կի զմի՝ ի ծառայից իւրոց սռաքեր , առ
 ինքն զայրն Աստուծոյ ածել : Իրեւ ածաւ
 բազում պատուով յարքունական քաղաքն ,
 պատգամառնա Ա միրապետն յղեր՝ զի ըստ
 սովորականին զարդու զինքն զգեստաւո-
 րեալ՝ այնպէս զնա տեսցի : Իսկ նորա զա-
 ւարտահասակ դիտակն իւր ես առաւել փայ-
 լուն և պաղպաջուն զգեստիւք պՃ՞նաւո-

բեալ, և զաղէրեկ ծաղկեալ մօրուսն ոսկե-
 փունջ կազմեալ, և զոսկիանկար գաւազանն
 որ՝ ի փայտից ոսկնիազից, 'ի ձեռն առեալ՝
 այնպէս ապա գունեան այրն և թիկնաւետ
 առ. Ամիրապետն մտաներ : Օ որ տեսեալ՝
 հիացեալ զարմացեալ ընդ գեղեցկութիւն
 նորա բարեհամբոյր հասակին, շքեղաշուք
 դիտակին, ապա եղաւ աթոռ՝ նստել նմա:
 Եւ սկսաւ հարցանել ցնա Ամիրապետն .
 Ծնդէ՞ր՝ ասէ, սյդպէս պճնապաճոյՃ լինիս .
 վասն զի՞ Քրիստոս ձեր զպարկեցտ և ընդին
 զգեստ պատուեց, և զնոյն արարին աշա-
 կերտք նորա : Իսկ նորա պատասխանեալ
 ասէ . Ճակապէտե Քրիստոսի Աստուծոյ մե-
 րոյ առ՝ ի մէնջ առեալ մարմնովն զԱստուա-
 ծական փառան ծածկեալ լիներ իրեւ վա-
 րագուրաւ, սակայն Աստուածային զօրու-
 թեան սքանչելիք նշանացն ոչ ծածկեցու,
 այլ յամենեսին հեղաւ . զնոյն չնորհ նշա-
 նացն և արուեստից տալով՝ ի ձեռս աշակեր-
 տաց իւրոց՝ որ բաւական թերեր զմիտս մարդ-
 կան զարթուցանել յերկիւղն Աստուծոյ .
 և ոչինչ պիտոյացան զգեստուց ահացողաց .
 Իսկ արդ՝ վասն զի փակեալ է՝ ի մէնջ բա-
 զում նշանաց նոցա չնորհ, վասն այսորիկ
 ահարկու զգեստիւք իմն հնարիմք զպարզա-
 միտ խակութիւն մարդկան ընդոստուցանել
 յերկիւղն Աստուծոյ : Օ այս ապա և՝ ի
 մարմնաւոր Յիշագաւորսդ՝ ի ձեզ է տեսա-
 նել. ծիրանէփառ և ոսկեհամուկ զգեստիւք,
 և գեղեցիկ զարդուք և զինուք առ՝ ի յահ-
 արկութիւն բազմաց բերիլ . զի թէ խա-

բազնազգեաց զձեղ՝ի մարդկանէ ոք տեսանիցէ, և գծուծս և խոշորս՝ ոչ ոք պակուցեալ զարհուրեսցի՝ի փառացդ ձերոց, որ ոչն երեւի: Ծայց եթէ, զբովանդակն զիմքտանելխուզես, հրամայեսցէ Տէրութիւնդքո՝ արտաքս սակաւիկ մի գնալ արանցդ: Խակ ապա՝ի միայնանալն՝ մերկացտւ առ՝ի զգեստուեն արտաքնոյ, ցուցանելով նմազցիսիսն այծեայս ասելով. Ո՞երկութեան անդամոցս այս է զգեստ, իսկ արտաքոյդմիայն են՝ի տեսիլ արտաքնոց: Եւ իբրև զձեռն ՚ի ցփսիսն արկեալ լիներ լիմրապետն, գժգմեալ խոժոռեալ քստմնելով ասեր. Օ խաղը արդեօք կարէ մարմին մարդոյ տեել ժուժկալել այսպիսի դժոխըմքերելի քրծի, եթէ ոչ յլ ստուծոյ տուեալ լինի նմա համբերութիւն: Եւ ապա բազմահարկի սպատուով զնա մեծարեալ, և եօթն անդամ զնա պճնաւորեալ գեղեցիկ իմն և արքունական զգեստիւք, և գանձս ևս ոսկեոյ և արծաթոյ նմա պարգեեալ յուզարկե յիւրական աշխարհն: Որոյ եկեալ, և կեցեալ ամս սակաւ՝ վախճանի, կացեալ յաթոռ հայրապետութեան ամս մետասան:

Ե՞ն:

Ոխագաւորք աստուածասերք և բարեպաշտօնք, իշխանք, և պետք, և հրամանատալք հայոց, եղբարք մեր, և առաքեալք եկեղեցւոյ, և փառք Վրիստոսի: Վաղերս առաջի մատուցանեմ ձեզ զպիտառութիւն զայս բանի, զի իբրև ցուցող հայելի՝ի միտս անբասիրս սովաւ զձեղ հրաւիրեալ, և զան-

դուգն և զանկարդ ճամարտակելն արտա-
 հալած արարեալ անպատուհաս ես մնացից
 յահեղ մըրկե աստի , և յահագին ալեացս
 փրփրեցելոց , և դիզացելոց , և կուտակե-
 լոց , և դիմելոց 'ի վերայ Ասքանազեանս
 դրոհի : Աարսափեալ զոփացեալ դողացաւ
 սիրտ իմ , զի տիգօք աչաց խաղաց Տէր 'ի
 վերայ մեր՝ սակս անօրէնութեանց մերոց :
 Եւ վասն զի ցարդ ևս յարակցեալ յուղ-
 մունք անդնդապտոյտ չարեացն յորդութիւնք
 խորութեանցն՝ և ոչ հանդարտեաց , վասն
 այսորիկ ես բռնադատեցայ դալ յայս , և
 առնել տալ տապնապեալ զպատմութիւնս .
 նախ 'ի կըից աստի զիս փութացեալ որ
 շուրջ պատեալ պաշարեաց զմեղ . և ապա 'ի
 հրամանէ թխագաւորաց 'ի վերայ հասելոց՝
 որ զիմն Ճմշեալ բախեաց զիմաստիցս դոր-
 ձարան , և հաւանեցոյց ոչինչ դու ինձ յայս .
 միկ դանդաղելի : Աակայն ոչ դրաւորական
 անձայն տառիւք միայն՝ որ 'ի վեր քան զիս
 է ձկտումն իրի՝ զմտաւ ինչ ածեալ , այլ բո-
 լորձայն հնչմամք հագագասփիւռ ձայնիւ
 դարուց 'ի դարս զայս ձեզ աւանդեալ ուղ-
 ղախոչ իմացուածիւ . զի մի անհասութիւն
 ծերունեացն զրուցաց՝ այլոց ումանց վեպս
 ինչ խարեալ խղճի մտաց կարօտ ձեզ կա-
 ցուսցե . այլ զի զայս արձակեալ յարտա-
 դրութիւն բանիս մսքրական մտօք՝ անբա-
 զայապէս 'ի մասնաւոր ասացելոց աստի տես-
 ցի զինի եկելոց իւրաքանչիւրոցն անցնու-
 րոյն զրուցաց ստուգութիւն՝ ըստ ընթեր-
 ցանութեան հանդիսի բանիս : Եւ այս՝ ցայս

վայր հերեւքասցի : Այսլ ևս այսուհետեւ 'ի
 մաղթանս առաջի ձեզ ընթերցողացդ մա-
 տուցից , մի բերիլ ձեզ ևս վերստին յայս
 տեղի տանջանաց , յորս և այժմ առ հասա-
 րակ թմբրեցաք 'ի ծուխ մեղաւորաց . այլ՝
 ախորժաբար լսող լինել աղերսալի իմոցս
 բանից , և բաղաձայնութեան խրատու : | ի-
 նել ձեզ զաւակ լաւագունի պատարագեցե-
 լոյն Աիթայ , և գրիլ յորդիս Աստուծոյ .
 այլ ոչ խառն ընդ անիծեալ եղայրազրաւն
 կայենի զարմից կապիլ 'ի կնատ , և 'ի մեղ-
 մեխ , և 'ի վայրաքարշ դստերս մարդկան :
 Ա՞ն 'ի չար ուղիսից Անդարամետին զրա-
 հեղեղ սատակմամբ ողողեսջիք , որպէս յայն-
 ժամ երկնասահան և երկրահոսան ջրահեղ-
 ձոյց մարդիկք 'ի ոյեան դարուն . այլ՝ աւե-
 տարանական ուռկանաւ արկելոյ 'ի ծով՝
 զուսպ և ամփոփ վարուք ժողովեալ կարթիւք
 յարքունական կայանսն : Ա՞ն անկանոն կրօ-
 նիւք ամբարձջիք 'ի տան նանըութեան , և
 հրացայտ ցոլացութեան ծծմբոյ դիւաշունչ
 հողմոյ զձեզ պտուտեալ տուղիցէ կորստեան
 կիզմամբն . այլ՝ ելեալք 'ի Ասդոմայ , այլե-
 'ի Աեգովրայ՝ ևս յիմանալի բարձրութիւնն
 սքանչելապէս լերանցն յաւիտենից թեա-
 կոխեսջիք . ուր պայծառապէս իսկ բորբոքի
 ջահ սրբութեան զգուշացելոցն յարթնու-
 թեան : Ա՞ն խոտորեսջիք յարքունական 'ի
 կուռ պողոտայէն յաջ կամ յահեակ՝ թողա-
 ցուցեալ զկամն ձեր զկնի պատրանաց պատ-
 րողին . վասն զի յերկոցունց կողմանց դա-
 րանակալ է աւազակաց բազմութիւն , և

մահէ բաժին անկելոցն 'ի ձեռս նոցա : Ա'ի
մեղիցէ ձեզ կարծեցեալ արեգակն տուըն-
ջենային , և կամ լուսին գիշերոյ դիւամո-
լար խռովութեամք . որ մերոյին քնութեանս
կրիւք խարեացն զմեզ , և խարէ . այլ՝ զանց
արարեալք զփաղաքշական խորհրդովք ախ-
տից յողդողդելոցն . զի ճշմարիտ արեգակն
արդարութեան ծագեսցի 'ի սիրաս ձեր սի-
րոնն ։ Աստուածայնով : Ա'ի քրեիքուր վա-
րուց չարութեամք նաւարեկեալք՝ ապա-
շաւեսջիք զուղիղ և զջշմարիտ զձեր վարս ,
և կոխան գուեհաց եղիջիք իբրեւ զաղն ան-
համեալ . այլ՝ ողջ ամբողջ և անխախուտ մնաս-
ջիք 'ի պարսաւադիտեն դժրողէ , խնդու-
թեամք . ժամանեալ 'ի նաւահանգիստն կե-
նաց : Ա'ի զպարծանս Հարցն առաքինու-
թեանց ձեզ բաւական վարկեալ , և 'ի նոյն
ապաստանեալ՝ պղերգութեամք անձանց 'ի
վիհս խորափիտս ընկղմեսջիք . զի թէ հօր
հմտաբար տեղեկութեամք դեկավարել՝ զինչ
օդուտ յայնմանէ որդւոց բերցի , եթէ 'ի
նաւարեկութեան կորնչիցի . վասն զի ոչինչ
շահ զհօրն հմտութիւն կարծեմ լինել որդ-
ւոց նաւարեկութեան : Ա'ի օտարացեալք
եղիջիք 'ի Ա'օրէ՝ որ վերսախն զձեզ ծնաւ
նորոգատուր բանիւն կենդանականաւ 'ի
կեանսն կենդանի : Ա'ի խարիցիք յարդան-
դէ լուսաւոր և փրկական զդեստիւն՝ որով
վայելքապէս զդեստաւորեցոյց յարդանդէ
։ Ա'ի խօսիցիք ստութիւն՝ զա-
ռեալն իբրեւ զառեալ նանբապէս համա-
րեալ , և ժատող լինել որդւոյն սիրելոյ

Աստուածական պատգամացն լեռնացելոց ,
 այլ եռանդնասէր սրտի ջերմութեամբ հեռանալ յայնմանէ՝ որ ինչ վնասակար և հակառակ է հոգւոյ . և 'ի բաց զտխրութիւն տարեցս մնութեաց մերկանալ մաքուր մնոք :
 Այսպէս թերեւ և Արովեհականացն ևս երրեակ դասու խորին խորհուրդս թեակո խեսջիք և դուք , և վեցթեեան երագաշարժ դործեօք իմն զօրհնաբանականսն ըստ պիտոյս բաժանեսջիք . ոմանք խուճապելով զսպիլ՝ ոչ ևս արժանի ըստ որումն վարկեալ . իսկ այլովք ոմամբք վերշարժիլ 'ի մշտնջենական փառատրութիւնս՝ ըստ պատահելոցն պարագայութեանց 'ի պաշտօն Աստուածայնոյ փառացն : Ապա հանդիսապէս արժանի դըտ ջիք յետ այսմ ժամադրութեան կենաց՝ մտանել յամակ իմանսալի Աինէական լերինն . ոչ 'ի փորձ հրոյ 'ի վայր բերեալ ըստ պայմանի խուռույ յաւուրն ընտրութեան , այլ ամբաջու թեօք սլացեալ 'ի վերին Աիսն՝ 'ի հայցել զտեսութիւն Աստուծոյ . ոչ վիմով ծերպի զեղչել , և զյետոյսն միայն տեսանել , այլ զբովանդակ նկարագիրն փառացն հօր դէմ յանդիման նկատել . և զայժմու փոքր 'ի շատէ խելամնութեամբս զանց արարեալ ծանօթք եղիջիք պատրաստական վայելութեանն . և յայնժամ գիտասջիք՝ եթէ որպէս նայն ծանեաւ զձեզ : Արդ՝ այսքան բան ձեզ խրատու բաւականասցի , Աէրջաբան ,

ԹՈՎՄԱՆ ԱՐԴՐՈՒԽԵԿԻ , THOMAS ARZERUNENSIS .

in the tenth Century .

Աստանօք սակաւուք բացայայտեցից զոր-
պիսութիւն բնակչաց լերինն (որ կոչի լոյթ)
թէ զիարդ , կամ որպիսի ոք են , և որպէս
հնարաւորեալ յապրուստ անձանց՝ վճարեն
զկարեւոր պէտս իւրեանց՝ լի՛ աշխատու-
թեամք , և սաստիկ տառապանօք : Եւ բնա-
կութիւն նոցա 'ի խորածորս , և 'ի փապարս
լերանց , և 'ի պրակս մայրեաց , 'ի դադա-
թունս լերանց : Եւ բնակեն առանձին ըստ
տունս ազգաց . և այնչափ 'ի բացեայ են 'ի
միմեանց , մինչ թէ ոք յարանց զօրաւորաց
'ի բարձրաբերձ տեղեաց ուժգին խանչի-
ցէ , հազիւթէ ուրեք կարիցէ առնուլ զրոմ
բիւն ձայնին՝ իբրև 'ի վիմաց ինչ արձագան
լինելոյ կարծիս բերելով : Եւ կէսքն վրի-
պեալք 'ի բնական հայրենի լեզուեն յա-
զագս հեռաբնակն լինելոյ , և անհամբոյրք
միմեանց հանդիպեալք , և խօսս միմեանց
եղեալ կարկատուն մնւրացածի բանիւք . և
այնքան խրթնի անձանօթք պատահեն առ-
միմեանս , մինչեւ թարգմանաց անգամ կա-
րօտանան : Եւ զպէտս կերակրոցն վճարեն
'ի սերմանց ինչ , առաւել 'ի լորեակ կոչե-
ցեալ սերմանեն՝ զոր ոմանք 'ի սով ժամա-
նակի հաց անուանեն . և զնոյն ոռոգեալ
ոտիւք 'ի միջոցս պրակացն , կամ երկմատնի
փայտատովք սերմանեալ : Եւ է զգեստ նո-

ցա ասուիս 'ի ծածկոյթ մերկութեանն . և
օդ ոտիցն հնարաւորեն զձեւ կօշկաց 'ի մոր.
թոց այծից կազմեալ . և միով կերակրով , և
միով հանդերձիւ բաւականան զամառն և
զձմեռն : Աւ են ստացեալ զէնս աշտեայս՝
հանապազ կրելով ընդ ինքեանս 'ի պատրաս-
տութիւն գազանացն՝ որք 'ի լերինն բնա-
կեն : Այլեւ 'ի ժամանակս հասելոց թշնա-
մեաց յերկրին իւրեանց՝ գան միաբան լեռ-
նայինքն յօդնութիւն իշխանացն , զի են տի-
րասերք : Ասկ վասն ձեանն անկայուն զօ-
րութեանն՝ որ այն ինչ յամսոյն 'ի վերայ
զեղեալ լինին , հնարաւորեալ իւրեանց
փայտս իբրև զանուրս չուանօք պարունա-
կեալ շուրջ զոտամբ՝ դիւրաւ ընթանան 'ի
վերայ ձեանն իբրև ընդ ցամաք երկիր : Աւ
են գազանաբարոյք , արիւնարբուք՝ առ ոչ-
ինչ համարելով զսպանումն եղբարցն հարա-
զատաց , նաև զանձանց ևս : Աւ կոչին սո-
քա մեկնակազենք սուրչհանդակք բնակեալք
'ի լերինն՝ որ բաժանե ընդ Աղջնիս , և ընդ
ջարօն . և յաղագս խրթնի և անհետազօ-
տելի խօսիցն , և բարուցն՝ կոչին խութ . յո-
րոց անուն և լեառն խոյթ անուանի : Աւ
դիտեն զլազմոսն զհին թարդմանեալսն
Ա արդապետացն հայոց . զոր հանապազ 'ի բե-
րան ունին : Առքա են գոեհաք Ա սորոց՝ ուր-
լուիցին , զինի Ա դրամելեքայ և Ա անասարոյ
որդւոյ Ա ենեքերիմ արքայի՝ թագաւորի Ա
սորեստանի և Ա ինուելի . յորոց անուն ին-
քեանք Ա անասեայք զինքեանս անուանեն .
և են հիւրասերք , օտարընկալք , պատուա-

274
Դիբք . Պատմութեան :

Իսյց երանելիս այս Գևորգ՝ մինչ կայք
ընդգէմ սրոյն , և դահիճն ծեծէր իբրև
զանզգայ ինչ . և ոչ փոքր մի դիմ կարա
ցեալ հարկանել՝ի մարմին սրբոյն զխոցումն
սրոյն՝ դարձաւ՝ի դահիճն կոյս պատճառաւ
աղաչելութեան՝ տեսանել , թէ ընդէր ոչ
հատանիցէ սուսերն : Եւ առեալ՝ի ձեռաւ
նե նորա զսուսերն՝ շողացուցեալ հայեցաւ
յայսկոյս յայնկոյս , և ասէ . Ո՞վ անարի վա՛տ
արանց , և կանացի այր , թշուառական զի-
նաւոր , շուն անպիտան Տեառն իւրոյ . և
հարեալ զպարանոց դահիճն՝ի բաց առ
զգլուխ նորա : Եւ զարմանք կալան զամե-
նայն բազմութիւնն՝ի վերայ սինդութեան
սրտին , և զօրութեան ուժոյն , և քաջու-
թեան նահատակութեան՝ զոր գործեաց ե-
րանելին Գևորգ : Անդ :

Իբրև . ձմեռն փոքրացաւ , և ժամանակ
դարնանային եղանակին մերձեցաւ , և օդն
մառախղաձե միզախառն յատակեցաւ , և
հարաւային ջերմագոյն օդն չնչեաց՝ի խո-
րագոյն դաշտն քաղաքին Կալմեայ , և ըն-
դարմացեալ արմատքն և բոյսքն զգենուլ
սկսան զզօրութիւն , և թուչունք և գաղանք
ծանեան զժամանակս դալստեան իւրեանց ,
և աշխատասէր մշակքն պատրաստեցան՝ի
գործ երկրասէր վաստակոցն , և որսորդքն
զիւրեանց գործիսն պատրաստէին , և վա-
ճառականքն զհեռաւոր ճանապարհացն խո-
կային պատրաստութիւն , և հովիւքն տա-
ւաղելով զդառինսն քշէին՝ի դալարաբեր

հովիտն , և ամենայն ոք ըստ ազգս ազգս
փութայր 'ի հնարս ինքեանց վաստակոցն՝
մի զմիով ելանելով : Ահա :

Խւ արդ՝ մեր բաղձալի սիրով բուռն հա-
րեալ զգեղեցիկ պատմութեանց՝ զբազմօք
զանց արարաք զրուցարութեամբք , մանա-
ւանդ որ անհուն շատաբանութեամբք իցեն
լի՝ անօդուտ մեզ առ 'ի պատմել , և անշահ
լողաց առ 'ի լսել . ուստի և յայսցանէ 'ի
բաց որոշելով զմեր միտս՝ յօդտակարն մեր
փութասցուք պատմութեանցն հանդես . և
անվրէպ յայտարարութեամբք որ ինչ 'ի սկըզ-
բանց անտի շինութեան աշխարհիս Հայոց՝
'ի Հայկայ աղեղնաւորէ , և 'ի նորուն զար-
մից . և ցկաթոտ և վաւաշոտ ՝ ամիրամն տի-
կին Վասորեստանեայց , և 'ի նմանէ յայլս . և
յայլոց ևս յաւէտ ձեռակերտք և շինուածք
յիւրաքանչիւրոցն յերկրիս մերում եղեն .
մեր առ ամենայն անձամբ հասեալ , և աչօք
տեսեալ . ձկտեալ և 'ի հեռաւոր աշխարհս՝
մինչև ցկարջս , և ՝ ուշերթացիս , և առ լե-
րամբն կաւկասայ , և յլ հիզ մինչև 'ի մուտսն
'ի Գաղայ , և ընդ Տայաստան , և ընդ ամե-
նայն Հիւսիսականս , և ընդ Վարեւելս՝ 'ի
հետիոտս գնալով տեսաք զգործ քաջաց և
նախնեացն մերոց՝ զմերս զրաւեաց զմիտս
և զտեսութիւն հրաշակերտն , և քան զբա-
զումն նորանշանն և զարմանալին Վղթա-
մար : Որ թէպէտ և յառաջ քան զայսոսիկ
'ի Կաւթայ Վահառոնւոյ , և 'ի Գաղափիրա-
նայ ասի առեալ շինութիւն՝ որ զՊաղես-
տինացւոց աշխարհն հանդերձ Հիւրկիա-

նեաւ քահանայիւ գերեալ ած ընակեցոյց
 յերկրիս մերում, սակայն ամենեքեան սոքա
 իբրև 'ի տաղաւարի, և կամ որպէս 'ի հիւզս
 մրդապահաց բնակեցան յերեւելի յայնմիկ
 կղղւոջ կոչեցեալն Աղթամար, մինչև յա-
 ւուրս մեծի արքային Հայոց Դագկայ: Ո՞՛
 քաջակորով գիտութեամբնայեցեալ 'ի տեղ-
 ւոյն զրօսանս, և ծանուցեալ զնա ապաստան
 լինել աշխարհի 'ի հինից թշնամեաց՝ ձեռ-
 նարկե հիմնարկել զնա ահեղիմն և զարմա-
 նալի հիացմամբ: Հրաման տուեալ բաղրում
 արուեստաւորաց, և անթիւ մարդկան ըզ-
 հատեալ վեմն ծանունս և դժուարակիրս
 հոսել ընկենուլ յատակս ծովուն անհնա-
 րին խորութեան: և ժամանակաւ ինչ այս
 պէս ջան յանձին կալեալ մեծի Արքային՝ և
 յանկարծակի եկն եկաց կանդնեցաւ քա-
 րայատակն ամբարտակ կանգունս հինգ 'ի
 վերայ բարձրացեալ մկանանց ծովուն: Ո՞՛
 մնացն աչօք իբրև 'ի յամնքի շարայարեալ
 տողադրե զհաստակառոյցն վիմաց կարգս:
 յորոյ վերայ լար եղեալ՝ ձգե զարիսպն
 շուրջանակի իբր ձիարշաւանօք հինգ: Եւ
 սպարիսպն է հրաշակերտ, ահեղակերպ, բարձ-
 րաքերձ՝ լայնանիստ բրդամբք, և բարձրա-
 ցեալ աշտարակօք զարդարեալ. անկիւնաւոր
 խորանանման տախտակաձեւ յինքեան ունե-
 լով գահոյք զրօսանաց: յորում հանդերձ
 որդւովք, և աղատակոյտ զօրօք միշտ ուրա-
 խանայը Արքայ: Խոկ և զգլուխս պարսպին
 ածեալ 'ի կիրճն դժուարածս քարանձաւին՝
 'ի համբոյըս միմեանց մերձեցուցանէ: Դ շըր-

թունս խորայատակ հիմանց ծովուն դնե՛
 դրունս ահաւորտեսս , հաստահեղոյսս , բեւե՛
 ռապինդս + որով և զմասն ինչ ծովուն 'ի
 կղզին կոյս հատանելով՝ հրաշալիս իմն ներ-
 գործեաց + բազում նաւաց յօրինեալ խա-
 ղաղ և անքոյթ նաւահանդիստ՝ բարձրա-
 գոյն հրաշակերտեաց քան Աղեքսանդրին 'ի
 Ակեղովն քաղաքի : Եւ որպէս ինձ թուի ,
 զանցոյց զարմանալեօք զԱ ամիրամեան փոր-
 ուածոյ սենեկօքն , և զամբարտակաւ գե-
 տոյն՝ որ առ ստորոտաւ լերին Ա արագայ :
 Օ ի նորայն գոնեա 'ի ցամաքի , իսկ սա 'ի
 մեծ խորոց ծովուս արուեստակեալ՝ հարս-
 տահարե՛ զամենայն միտս , և զգործս իմաստ-
 նթցն առ 'ի քան զինքն եղելոց : Եւ այնու-
 հետեւ ժողովեալ 'ի դուռնն Արքայի՝ իշխա-
 նաց , և տերանց , աղատաց , և ռամկաց ,
 Եպիսկոպոսաց , և Արօնաւորաց , զի ամե-
 նեքեան օն անդր փութապէս շինուածս և
 ձեռակերտս հաստատեսցեն . հրաման տայ-
 ցէ՝ զի լինիցի տեղի ապաստանի ամենայն
 հինից 'ի թշնամեաց եկելոց : Եւ թագա-
 ւորն դթացեալ՝ ոչ արգելու զինդրեալ
 պարզեւմն : Եւ զինի հնդից ամաց՝ յորմէ հե-
 տէ սկսան շինել , պայծառացեալ բարձրա-
 ցաւ շինութիւն քաղաքին առաւել քան զա-
 ռաւել : Քայնժամե իւր իսկ Արքայի ամե-
 նիմաստ հաստողութեամբն հանդերձ բա-
 զում արուեստաւորօք զլար ճարտարութեան
 'ի ձեռն առեալ՝ գծել միանդամայն և գծա-
 գրել նշանակել առ ստորոտաւ լերինն՝ որ
 է գաղաթն կղզւոյն , զտեղիս զքօսացուցա-

նողս վայելսաւորս ըստ արժանի կայենից
արքայական իւրոցն հանգստեան՝ ձգելով
պարսպունս, յարդարելով զփողոցս, և դարս
դարաստանաց, և դահս ըստ դահից տէրու-
թեանց, և բուրաստանս, և պարտէզս բու-
րաստանաց և ծաղկոցաց՝ որոշեալ հովիտս.
զորս վաղվաղակի ածեալ՝ի կատարումն հա-
սուցանէ զամենայնն. ևս և ծառատունկ բա-
զում՝ զոր ոռողեալ արքուցանեն՝ի բարե-
համ անսպառ աղբերէն, որ ակնարկելովն
խնամողին Աստուծոյ կայ՝ի մշջ քաղաքին:
Եւ քանիզի էին՝ի դրան արքունի գումա-
բեալք արուեստաւորք բազումք՝ արք պատ-
ուաւորք ժողովեալք յամենայն ազգաց երկ-
րէ, որք ոչ վրիպէին առնել զոր խորհրդ
Արքայ, այլ ըստ հրամանին վաղվաղա-
կի և գործն առնոյր զկատարումն : Ումեմն
՝ի նոցանէ ձարտարապետի առն իմաստնոյ
և հանձարեղի՝ հրամայէ թշագաւորն շինել
տաձար մի քառանկիւն՝ քառասուն կանգնաւ-
ունելով զափ լայնութեան և երկայնու-
թեան, նմանապէս և՝ի բարձրութիւն :
Արոյ որմոյն լայնութիւնն երիւք մեծաքայ-
լութեամք չափով ունի զպարզուածն, գունդ
անսպակ կրոց և քարի իբրև զհալուածն
կասպարի և պղնձոյ ընդ միմեանս խառնեալ:
Եւ շինուած տաձարին՝ի հիմանց անտի
մինչև ցգլուխ նորին՝ի թռիչս կազմեալ,
առանց սեանց ունի զհաստատութիւն. և
է որ (որ և է) արդարեւ արժանի զարմա-
նալոյ՝ի վեր քան զմիտս : Ունի և խորանն
կամարակիցս, և անկիւնս, և շրջապատս գե-

զապահոյնս՝ անթիւ մտաց, և անզննելի ա-
 չաց : Աւնի և գումբը, թս Երկնաշարթս, ոռ-
 կեզարդս, և լուսաձաճանչս . յոր թէ նայել
 ոք կամիցի, իբր թագաւորի իմն պատիւ առ-
 նելով՝ նախ 'ի բաց առցէ զիսոյր գլխոյն, և
 ապա տանջեալ զպարանոցն՝ հազիւ թէ նըշ-
 մարել կարիցէ զզանազան դեղոցն կերպա-
 դրութիւնս : Եւ է կարգ շինուածոյ տաճա-
 րին ահեղ իմն և զարմանալի . և այնքան
 բարձրագոյն և անհաս է մտաց՝ զորօրինակ
 թէ իմաստուն ոք այր ընդ մի կարգ խորա-
 նի միջոց զբազումն ժամս նայեցի, արտաքս
 ելեալ՝ ոչինչ յորոց նայեցաւն պատմել ու-
 մեք կարասցէ : Ա ամս զի են 'ի նմա ոսկե-
 զարդ գահոյք՝ յորս բազմեալ երեկի Արքայ
 նազելի ճոխութեամբ, շուրջ զիւրեաւ ու-
 նելով պատմանեակս լուսատեսակս՝ սպասա-
 ւորս ուրախութեան . ընդ նմին և դասս
 կուսանաց, և խաղս աղջկանց զարմանալոյ
 արժանիս . անդէն և սուսերամերկաց հոյլք,
 և ըմբշամարտկաց պատերազմունք . անդ և
 դասք առիւծուց, և այլոց գազանաց . և
 անդ երամք հաւուց զարդարեալք 'ի պէս
 պէս պաճուճանս : Օ որ եթէ զամենայնն՝
 որ 'ի նմա գործք, 'ի թիւ ոք կամիցի ար-
 կանել, բազում աշխատութեան պէտք են
 անձինն, և լսողաց : Եւ է փառք տաճարին
 ահեղ իմն և զարմանալի . եղեալ են 'ի նա-
 դրունք հատուածոյք մանր յօրինուածովք,
 և հրաշալի գեղգեղմամբ 'ի բանալն իւր-
 եանց . երկբացիկք են, օդաբերք, զովա-
 ցուցիչք . իսկ հուպ առ միմեանս գոլով՝ եր-

ևին իբրեւ զմի պատկեր : Պատմեաց մեզ և
հաւատարիմ Աստիկան մի 'ի գործավարաց
քաղաքին , Եթէ Եմուտ 'ի շինուած տաճա-
րին Երկաթ լտերս իբրեւ Երկերիւր հազար .
և հաւաստապէս Ճշմարտութեամբ նուա-
զեաց զասելն , քան թէ առատութեամբն
յաւելեաց 'ի բազումն : Խոկ և նիստ փա-
ռաց տաճարին յամենայն կողմանց գաւա-
ռին 'ի մէջ քաղաքին Երեխի իբրեւ զմեծ մի
բլուր՝ ոչինչ նուազեալ բարձրութեամբ քան
զքարաննաւ ծայր կզգւոյն : Պարսպէ անմեր-
ձենալի ամրութեամբ և զծայրս ամրոցին .
և շինեալ 'ի նմա շաեմարանս մեծամեծս ,
և համբարանոցս , միանդամայն և տունս
դանձուց , և ասպազինաց անհուն բազմու-
թեանց : Ի՞ւլ Եթէ զամենայն զարդ շինուա-
ծոյն , զոսկեզարդ փողոցսն , և զգումբեթա-
կազ խորանայարկսն , և զզանազան տեղիս
դահոյիցն՝ որք առաւել այլակերպութեամբ
մի քան զմի գերահրաշապէս փայլեն , և ըստ
արժանեացն մանրամանաբար գովասնել
ոք կամիցի , կարծեմթէ յանհասու ձկտեալ
տատանի , որ և հասանելոյ չէ կարողութիւն :
Ի՞ւյց մեր զդիպողսն և զպատշաճաւորսն՝
որքան է կարողութիւն , 'ի լրումն ընծայե-
ցաք գեղեցիկ քոյոցդ ախորժակաց՝ ովք քա-
ջազդի , և տան մեծի արդասաւոր և նախ-
նական Ա'եծ : Ի՞նդ :

Եւ քանզի նախածանօթ և յառաջդիտու-
թեամբ Ա ստուծոյ դիտելով զնա (զԴիադիկ
արքայ) թէ այնպէս լինելոց է՝ անդստին
յորսվայնէ մօր իւրոյ Ելից զնա իմաստու-

թեամբ հոգւովիք . վասն որոյ և չնորհեաց
նմա պատկեր լուսազարդ , և հասակ փառաց
անհամեմատ 'ի մէջ ամենայն մնեղեաց ըա-
նական ազգի . հարթ և ուղիղ հասակաւ .
վայելուչ և պայծառ երեսօք . հեր գլխոյ
նորա թիսակերոյ՝ դանդուրազեղ դիսաւո-
րութեամբ , ուղերեկ ջոկացեալ 'ի վերայ
սպետափառ ձակասուն յոյժ խուռախիտ
թանձրութեամբ . մրազարդ կամարաձե կըց-
ուածք յունիցն (յօնիցն) , և բիբք , և ար-
տևանունք հանդերձ պաղովք վկայեալք
իբրև զշուշան 'ի հովիտս ծաղկեալ՝ ծաւա-
լին հրաշազարդ յօրինմամբ . ունչք երկայ-
նագոյնք , և վայելուչք . լսելիք դիւրալուրք ,
և դիւրահաւանք 'ի բարիս . և պայծառք
լուսահրաշ նմանեալ դունով շրթունք նորա
իբրև զլար կարմիր . ատամնունք նորա հուսպ
առ միմեանս՝ զտեալք յաղտոյ . տեղք մնուր-
ուաց նորա զօրէն մանուշակի ծաղկեալք
'ի վերայ գունազեղ այտից՝ 'ի կերպս զը-
ւարթնոց տեսողացն զնա ցուցանէր : Ա՞Դ :

ԽՈՍՐՈՎ, CHOSROES.

in the tenth Century.

Չիք ինչ չնորհ զոր առանց Առաջնոր-
դաց տայ Աստուած : Այլ վերստին ծնըն-
դեանն որ 'ի հոգւոյն , և կենարար մարմ-
նոյ և արեան Տեառն բաշխումն , թողու-
թիւն մեղաց դարձելոցն 'ի խոստովանու-
թիւն ապաշխարութեան , ամուսնութիւն

զուգութեան , ընծայից , և նուիրաց , և
պարգեաց մատուցումն , և հոգւոցն հանգու-
ցելոց առ ՚Վրիստոս յուղարկումն , և մարմնոց
նոցա ընդ ամենապահ աջովն ՚Աստուծոյ ամ-
բանալ , և որ այլ ևս կարգք են ՚Վրիստո-
նէականք , և օրհնութիւն եկեղեցեաց ՚Ա-
տուծոյ , և սպասուց նոցա , կամ նշանի խա-
չին , կամ ՚Իիւռոնին գերագունի , կամ
երկրի , կամ ջուրց , տնկոց , սերմանց , պըտ-
ղոց , անասնոց , ախտից բուժելոյ աստուա-
ծոյին շնորհիւն , կամ այլ ինչ աստուածա-
տուր պարգեի միջնորդք՝ ՚Առաջնորդք եկե-
ղեցւոյ լինին : ՚Ի՞նի . ծամակաբ . եր . 44-45 :

՚Եւ զի՞ն է կաթուղիկէն : ՚Տիեզերական .
զի ամենայն եկեղեցիք ՚Աղղափառաց՝ որ
ընդ տիեզերս են , մի են : ՚Իի ՚Վրիստոս
յամենայն եկեղեցիս է՝ որ ըստ ՚Առաքելոյն
հաւատոյ շինի , զոր և ՚Առաքելական կո-
չեմք : Որ զի թէ և բաժանին ըստ տեղեաց ,
այլ ոչ եթէ ըստ ժողովրդոց : ՚Օի ՚ի ծա-
դաց մինչե ՚ի ծագս երկրի՝ ուր և հասանի-
ցէ ճշմարիտ հաւատացեալն յեկեղեցիս ՚Աղ-
ղափառաց , իւր եկեղեցի է . և ոչ որոշէ զնա՝
ոչ աշխարհն , և ոչ լեզուոյն օտարութիւնն .
այլ ընդունի որպէս մայր ՚ի դիրկս սաստիկ
սիրով : ՚Եւ այսպէս ամենայն ուրեք ՚Տիեզե-
րական կոչի վասն տիեզերաց հաւատացե-
լոց զգրունս բանալոյ , և զգիրկս սփռելոյ :
՚Երես . 154 :

՚Մնդրեսցուք մանաւանդ զլոյս իմանալի
շնորհացն ծագել ՚ի սիրտս մեր , և ճառա-
գայթարձակ փայլմամբ զամենայն զգայա-

րանս մեր լուսաւորել։ Օ ի յարեւելից մտաց
 մերոց մինչեւ 'ի մուտս արևու թանձրագոյն
 մարմնոյս՝ մի գտցի ինչ նսեմացեալ։ Ի յլ
 առաջնորդութեամբ Հոգւոյն սրբոյ նանա-
 պարհորդեսցուք միշտ յերկիր աւետեաց։
 ոչ ունելով զինի խմնրեալ ինչ՝ որ է քացա-
 խուտ վարք չարութեան, և ծանրացուցիչ
 պատաղումն վայրաքարշ կենցաղոյս, և ու-
 ռուցիկ փքացումն թեթեամտութեան՝ ա-
 չեցեալ յամենայն տեսակս չարութեան։
 Ի յլ Վովիսաբար զսպեալ ունելով 'ի մա-
 խաղի մտաց մերոց զոսկերսն Հովսեփայ՝ որ
 է նշխար պատուիրանաց փրկչին մերոյ Հի-
 սուսի։ Խռ մեծաւ հոգաբարձութեամբ ըն-
 թացուք զառապար կենցաղոյս, զի մի ծա-
 րաւով տուզորման մեղացն կիզեսցուք՝ զըր-
 կեալք՝ 'ի կենդանի ջրոյ աստուածային պա-
 տուիրանացն։ լեզի և դառն ունելով ջուր՝
 զար ուսումն ստայօդ պատմութեանց, զոր
 ոչ կարիցէ աստուածատես միտք ըմպել։
 Վանաւանդ թէ խաւարելոցն մտօք, և զըր-
 կելոցն 'ի ճշմարտութենէ՝ դառն թուի աստ-
 ուածային օրինադրութիւն, և անախորժ-
 ճաշակ։ Վինչե խաչին շնորհիւ մակարդեալ՝
 մաքրեսցին ճաշակելիք մտացն յաղտից, և
 իմասցէ զքաղցրութիւն պատուիրանացն Իս-
 տուծոյ։ Վ ասն որոյ կօշկօք տուաքինութեան,
 և հաւատոյ ամրութեամբ զոտս մտաց մե-
 րոց պնդեսցուք, զի մի 'ի խարամանեաց օ-
 ձիցն վնասիցիմք։ Ի յլ 'ի բարձութիւն բե-
 մի ձողակերտ խաչին սեղանոյ միշտ ակնա-
 կառոյց եղեալ յառեսցուք, որով զՀիսուս

տեսեալ՝ փրկիմք տիրապես, և կենդանան
նամք զանմահ կենդանութիւնն : Երես .
253-254 :

Դրեալ է, թէ՝ յարտաքնոցն Խմաստասէր
ոմն տուն շինեաց, և դեղագործ ոմն ասաց
ցնա . Կափեա զտուն քո, զի եկեալ դեղեց-
կայուցից զնա զանազան նկարուք պատկե-
րաց, և անգուածոց յօրինուածովք : Եւ
ասէ Խմաստասէրն . Ե՛կ, յառաջ նկարեան,
և ապա 'ի վերայ ծեփեցից . զի զգարշելիսն
ծածկելն է բարւոք՝ քան թէ յայտնելն :
Եւ մեծ Հովհան գրեալ է բերանն ոսկի,
թէ՝ զոմն Խմաստասէր 'ի հացկերոյթ կոչե-
ցին . և նա իբրև եմուտ 'ի տուն, և բաղ-
մեցաւ, նայեցեալ 'ի վեր, և 'ի վայր, և 'ի
չորեսին կողմունս տանն՝ ետես զանազան
գունովք զարդարեալ, և ազգի ազգի երան,
գովք պայծառացուցեալ . և լցեալ զրերանն
խխով՝ եթուք յերեսս տանուտեառն : Եւ
իբրև հարցեալ եղեւ, թէ՝ ընդէ՛ր արարեր
զայդ, պատասխանեալ ասէ . Եւ զի՞նչ վնաս
արարի . զոր դուք պատուեալ էիք, և ես
պատուեցի . և զոր դուք ոչ էիք պատուեալ,
և ես ոչ պատուեցի : Հայեցայ յամենայն
տունս, և տեսի զարդարեալ ամենեքումք,
և ոչ կարացի թքանել՝ զի պատուած էր .
և զերեսս տանուտեառն տեսի անպատիւ,
զի ոչ էր զարդարեալ առաքինութեամբ ըգ-
ներքին մարդն, և անդ թքի : Երես . 405 .

ՍԱՄՈՒԵԼ ԿԱՄԵՐՃԱԶՈՐԵՑԻ,

SAMUEL CAMERTCHATZORENSIS.

in the tenth Century.

Ոմանք ասացին, թէ Առյան ոչ էր սերմն առեալ, ոչ էր նմա փոյթ վասն սրբութեան աւուրցն : Այլ չէ և չէ իսկ այտպէս իմունալ : Ուեկնէ զայս քերանն ուկի չովհան . Օի թէպէտե ոչ էր՝ ասէ, սերմն առեալ կոյսն, այլ անհնար էր զօրինօքն անցանել . այլ կաց մնաց զաւուրս քառասուն, և ապա գնաց Ճշրուսաղէմ՝ ի տաճարն ըստ 4 ու կասու Շւետարանին : Օի որպէս թլփատեցաւ, նոյնպէս և կուսիւ մարքն սրբութիւն պահեաց : Խակ՝ ի քառասուն աւուր լինել սրբութեանն՝ որք զարուսն ծնանեին, և ութ-սուն՝ որք զէդմն, այս է պատճառ : Ա ասնզի արուն յորովայնի մօրն՝ ի քառասուն աւուրն կենդանանայր, իսկ էդն յութ-սուն . և արուն յառաջակողմն ըստ լերդին ջերմութեան յառաջ՝ ի քառասուն օրն կենդանանանայ, իսկ էդն՝ ի ձախակողմն փայծաղանն կենդանանայ յութ-սուն աւուր : Ճշօրէնքն պիւղծ համարեին զայն՝ որ՝ ի մեռեալ մերձենայր . վասն այնորիկ՝ որչափ յորովայնի մօրն մեռեալ կայր արուն, կամ էդն, պիւղծ համարեալ լիներ մայրն : Ճշ՝ ի ծնանելն՝ ըստ չափու աւուրցն զմեռեալն կըելոյ՝ սրբութիւն պահրտ էր պահել : Եւ

այս է ասել աւետարանին, թէ՝ իբրև լցան
աւուրք սրբութեան նորա : Հաղպատ պօնից
Տէրուանականաց :

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ, GREGORY NARECENSIS.

in the tenth Century.

Եւ արդ՝ զի՞նչ արժանաւոր ըստ քեզ
բամբասանս շարագրեցից 'ի կտակ մաղթա-
նաց մատենի այսր ողբերդութեան՝ ով անձն
իմ թշուառ ամենապատկառ, և առ պա-
տասխանիս բանից անբարբառ . անսպիտան
Վատուծոյ, և Արքոցն մասնակցութեան :
Օ ի եթե զլի՛չ մի ծովուց 'ի յորակութիւն
գեղոյ յեղեղեցից, և զգաշտս ասպարիսօք
բաղմօք սահմանեալ՝ 'ի տարածումն լայնու-
թեան քարտենի չափեցից, և զպուրակս յո-
քունց անտառաց շամբից եղեգանց 'ի հատ-
ուածս գոյութեան գրչաց կազմեցից՝ և ոչ
զթիւ մի 'ի բարդելոցն անօրէնութեանց
զօրեցից ընդ դրով սահմանի դրաւել: 'ի ա-
զի՝ թէ զմայրս ի իբանանու 'ի մի լուծ
կշուոց զօդեցից, և կամ զլեառն Արարա-
տեան 'ի կէտ ամբարձման նժարի միոյ ար-
դարութեան միջնորդ կացուցից՝ ոչ հաւա-
սարէ այնը հարթութեամբ համազուգակ-
ցել: Ի՞նչ. Է. 1:

Այն զի ծով է ինձ ծփանաց կենցաղոյս
բերմունք՝ յոյժ նմանագոյն . յորում կոհա-
կօք բազմօք անթիւ դիմեցմանց տատանեալ
հոգիս 'ի յայսմ աշխարհի մարմնոյս շինուա-

ծովիքը՝ ի նաւակիի : Օ որ Եշայիաս մարդարէ զյանկարծադէպ կատարածն՝ որ՝ ի Պարսկականն հինից, Երուսաղէմի և Աւմարիայ կործանման՝ նմանութեամբ այսը օրինակի կերպաւորեցոյց . որ և առ իմն հոգեորական խորտակումն զուգաձայնել՝ ոչ է սխալական : Վասնզի մինչդեռ չուեի ես յանհոգութեան անտարակոյսն վատահութեամբ՝ դոյզն կասկած արկածից՝ ի միտքերելով առ խորոց փոքր միջոցին՝ որ՝ ի մէջ հանդստեան և աշխատութեանն, իբր այն թէ հասեալ իցէ ձմեռն յամարայնի՝ բքաբեր հողմով ժամանեալ երեքալեանն դիմակցութեամբ՝ ամբոխեաց զհանդարտութիւնն : Ուստի նաւն՝ ի բախմանէ վայրենի ալեացն խորտակեցաւ, թեոյն ձեռնարկութիւն քայլայեցաւ, կայմն ամբարձման՝ ի կայից իւրոց խլեցաւ, առագաստին թուշարան յանկարկատելի ծուենս պատառեցաւ, շինուածոյն շուք անզարդեցաւ, առասամնք ձդողականացն խզեցաւ, տեսարանն զլխոյն դիտակի խոնարհեցաւ, ապաւանդակին պարան կտրեցաւ, ապաւինութիւն խարսխին լուծաւ, լուծք ստուարք ամոլիցն կցորդութեան բաժանեցան, սամիք ուղղվացն հետոց գալարեցան, լաստ հիմանն հաստարանի ընկղմեցաւ, զեկացն կառուցմանք անդէն սուզան, ըրոյն յարմարութիւն պատսպարան իսկոյն բեկաւ, կապարանք զըստին հաստուածոյ յօշատեցաւ, դողք ամիսովիման ծոցոյն կազմածոյ անարդեցան, խելք շրթանցն ե-

զերաց խախտեալ ոստեաւ , պաղպաջունք
բաղմականացն անկեալ բարձաւ , վանդակա
պատին վայելըութիւն յատակեցաւ , գահա-
ւորակին հանդստարանն շփոթեցաւ , մած-
մունք տախտակաշարք 'ի միաբանութեանց
միմեանց անջատեցան , հեղոյսք պինդման
քեւուացն քարշեցան : Առդասիք իրին յիշա-
տակարան ողբոց ինձ նմանեցաւ : Եաւու-
ղիղն հանդեպ նաւին դեգերեալ ողբայ ,
ձեռն 'ի ծնօտի եղեալ՝ արտասուաց դետս
իջուցանէ : Աշմարք սակաւ մնացուածոցն 'ի
ծայրից ծփմանց ազդելոյ ծովուն՝ իբր խող-
խողեալ բանաւոր , ողորմագին թախծանօք
չեծէ : Ա ասն զի թէ զբարի նաւապեան
երինաւորօքն զօրօք յաշխարհիս ծովու առ
'ի զխորտակեալս իմ տապան իմանալի դոյ-
ութեանս՝ առցէ աշխարել բանիս յարմա-
րութիւն , ոչինչ վրիպեացէ 'ի ստուգութե-
նէ : Քանզի արդարեւ ելաց բարեգութն
Տէր՝ յառակ մարդկութեանս՝ զթաղեալ
ազդակիցն . ելաց առ նմին և զիշրուսաղէմ
մոլեալ , և զչուդաս մոլեգնեալ . յորոց եր-
կուցն կորեաւ վատահութիւն յօրինակ նմա-
նութեան աղարտեալ նաւի . իսկ միւսն հա-
սեալ յատակս անդնդոյ՝ առասան յուսոյն
ձեռամք ունողին յանքոյթն արտաքերեաց
խաղաղութիւն : Բան . Է . 2 :

Քանզի և որպես իմաստակի ումեմն ար-
տաքնոյ բարուք թուեցաւ , չար ասել ըգ-
մահ՝ առ չիմանալոյն պատճառի , և ես վր-
կայեմ իմովս բանիւ . քանզի իբր զանզպայ
պաճարս անասնոց մեռանիմք՝ և ոչ զարհու-

ըիմք . կորնչիմք՝ և ոչ հիանամք . թաղեցեալ լինիմք՝ և ոչ խոնարհիմք . տարագրիմք՝ և ոչ տադնասպիմք . եղծանիմք՝ և ոչ զղջանամք . մաշիմք՝ և ոչ մտառեմք . պակասիմք՝ և ոչ պատրաստիմք . գնամք՝ և ոչ զգուշանամք . գերիմք՝ և ոչ ևս զգամք : Խակ հանգիստ ասել երջանկին Հովհայ ըդ վախճան մորդոյ , և ես խոստովանիմ զսոյն ընդ Արբոյն , եթէ ոչ ունեի զբեռն աշխատութեանն մնահացու գործոց ըստանձնեալ : Ունաւանդ զի՝ որոգայիթն գաղտնի , և հնարագիրն աներեակի . տարր ժամանակիս յանեից , անցեալն անյայտ , և ապառնին կարծողական . ես անհամբեր , և բնութիւն թերահաւատ . ոտք սնահաստատք , և միտք ցնդեալք . կիրք հարկաւորք , և բարք անժուժկալք . մարմին մեղսամակարդ , և յօժարութիւն երկրասեր . դիմամարտութիւն անկակից , և խառնութիւն ներհակական . բնակութիւն կաւեղէն , և անձրեք ուժգնակիք . կարիք անթուելիք , և պատահարք ամենագրաւք . միտք չարախրնամք , և տենչմունք բարիատեացք . կեանք առօրեայք , և զմբաղք սակաւաւորք . խարմունք յիմարութեան , և խաղալիք տղայականք . աշխատութիւնք ընդունայնք , և վայելմունք երազականք . համբարք ոչնչից , և պահեստ հողմոց . նմանութիւնք ստուբաց , և կերպարանք ծիծաղելիք : Վանզի իբրեւ եկն եհաս պատուիրանն , ըստ Պաւղոսեան բանին , անպատրաստ գտեալ զիս ինքեան , մեղքն կենդանացան յանդիմանեալ

յարդարութեանցն , և ես մահացայ կե-
նացն , և կենդանացայ կորստեանն : Գողա-
ցան օտարք չարին գումարք՝ զստացուածս
սրախս իմաստից , ըստ գրոյն կանխաբանու-
թեան : Իւան . ծէ . 3-4 :

Իստ հոլովման ընթացից ամանակաց յա-
ռաջ շարժութեան , որ ըստ լրապատարն
նշուլագեղն արփիաձաձանչ լուսակիրն օրա-
կշիռն մղտափարատն ակնապարար՝ ականն
արեւու՝ ստեղծականն արուսեկի , որ համ-
բարե՛ հոլովի՛ կուտե՛ ամաց յոլովութիւն 'ի
չափս դարուց՝ շնչասպառ և կենդանանո-
րոդ առուղեկան յաւիտենիս , 'ի յաւար-
տումն կատարման իններեակ Յորելինին ,
'ի սկիզբն պսակելոյ մտի տասնեկին՝ Յարե-
թական տոհմիս տումարի . յետ երից ամաց
անցելոց՝ որ զինի դալստեան 'ի կայս և 'ի
կոյս կողմանց հիւսիսոյ դիմաց արեւելից՝
յաղթող և մեծ կայսերն Հուռուսոց Իւասլի ,
յորժամընդարձակ և մակագաւիթ կանո-
նաւ սփիռ տարածեր՝ լիասահման և անխըռ-
ըոց 'ի ստուարակարկատ կոթողս կարծր ար-
ձանաց՝ 'ի ձգումն ձեռին՝ և յանխզելի լարս
պարանաց երկարագունից՝ անթարթափ 'ի
նոյն վերասլացեալ 'ի յաջ և յահեակ՝ սեպ-
հականել յաւելուլ բաժինս մասանց վիճա-
կաց՝ խմբից աշխարհաց 'ի ծոց իւր : Պար-
'ի յայնմ անդորրութեան միջոցի , յորում
եղերեալ ընդունեցաւ թշնամիք Եկեղեց-
ւոյ , ստացեալ հիմնեցի , կառուցի , կարգե-
ցի , կուտեցի , արձանացուցի , դիզի , բար-
գեցի , կացուցի , ցուցի , հաստատելով 'ի

Հրաշակերտութիւն միագոյ իրի՝ զբաղմաւ-
ստեղնեան նուագս դրութեան այսմ սովերի
արդասաւորի, ևս Վարիգոր կրօնաւոր քա-
հանայ, յետին Շահնահիւսաց, և կըտսեր
Ա արժապետաց, դործակցութեամբ եղքօր
իմնյ ընտրելոյ Քովհաննէս կոչեցելոյ՝ Եա-
րեկայ մեծափառ և բարձրապատիւ ուխտի
Ա անականի. որք իբրեւ զմի մալոմին բանա-
կան՝ ի յերկուց առ մի կերպարան շինելոյ
դիմաց կենցաղավարելով, ոչ միայն հարա-
զատք, այլ և միաշունչք միակրօնք համա-
պատիւք զուգահանք, ՚ի քառից տչաց՝
առ մի և նոյն շաւիդ խորհրդոյ տեսեալք:
Արդ՝ հայցեմք ՚ի ճաշակողացդ յայսմ սե-
ղանոյ յոքնօրէն և ախորժահամ հանգեր-
ձելոյ յիշատակել զմեզ ՚ի մաղթանս ուղիղս
և ՚ի պատկանաւոր խնդրուածս, սեռն սի-
րով ՚ի միտս բարիս. որով և դուք եղիջիք
դրեալ ՚ի մատեանս կենաց վերին դպրու-
թեան: Քիշադահարան Ա ապէնիս դրութեան:

Խրախացիր յաւետ հըմուանօքբերկրեալլդ
՚ի կանայս: Որ գժուարբնտել դաստիարա-
կաւ խացին վարժեալ կրթեցար, որդւոյ քոյ
կցորդակցութեամբ՝ միատեակն ժուժկա-
լութեամբ՝ կրելով զերաշխէալ վշտաց ծնի-
ցելոյդ ՚ի քէն Տեառն, մշտաշարչարն մե-
ռելութեամբ անձնատոչոր տօթով խարու-
կեալ: Իբրեւ զորոջ անարատ քահանայական
նուիրմամբ ՚ի վերայ սիրոյ սեղանոյդ մա-
տեար՝ ասրաբոյս և ստեագիսակ գեղմնա-
բարձ մաքուր պատարագ: ՚ի ճգնաւորա-
կան վարս ողջակիզեալ, քան թէ ՚ի սրոյ

Հանդես խողիսողեալ։ Ա ասն այսօրիկ՝ ՚ի նը-
ւէր քոյ զենման՝ հրեշտակացն պարք պաշտ-
ասնեալ, ընդ Ռուաքելոցն գումար դասակ-
ցեալ՝ զմիայն արժանիդ պատուեալ գովիճին
սուրբ Ռուստուածածին։ ՚ի նէրբող կրուին։

Հրամանք է աստուածասէր թագաւորու-
թեանդ, ո՞վ Տէր արքայ, բուռն և աւելի
էր քան զկար մեր. զի այդպիսի խնդիր,
մեկնել զշրգերգոց՝ այնոցիկ էր, որ ըստ
Վողովմննին է հոգւով։ Օք եթէ ՚ի իւսա-
ցին Գրիգոր, որ կատարեալ վարդապետ
էր և հոգիաբնակ, ՚ի բուռն կատարմանե-
մեկնութեան այսմ գրոցս վերջացեալ գտա-
նի, որչափ ևս առաւել ես, որ ամենայնիւ-
տգետ եմ, և ունայն ՚ի հոգւոյն շնորհաց՝
ոչ կարացից հետեւել մտացն ասացելոց ՚ի
Վողովմննեան հոգւոյն։ Ո անաւանդ զի չէ
փոքր դատապարտութիւն և պատիմք՝ զբանս
սրբոց դրոց օտար մեկնութեամք աղաւա-
ղեալ՝ վամն ոչ տգետ երևելոյ, և փառա-
մոլ հպարտութեամք՝ զուշոն իբրև զջմա-
րիտ ցուցանել։ Իւայց զի հրաման ունիմք
հնազանդ լինել թագաւորաց հրամանաց,
յանդգնիմ ասել զիմ տկար մտացս հասո-
ղութիւնն. յուսացեալ ՚ի Հոգին սուրբ՝
զնորսայն կատարելով հրաման, որ ասաց,
թէ, հպատակ կացեք թագաւորաց։ Ռոդ՝
նախ առաջին՝ խնդացի ընդ այս, որ այսալի-
սի միտս երևեցուցեր առ ՚ի քննել զգիրս,
և հոգ տանել ուսմանց, որ է դուշակ եր-
կիւղի Տէառն, և օտարանալոյ ՚ի պիղծ հոգ-
ոց, և ՚ի վայրապար քննութեանց, և ՚ի մեղ-

յասեր բարուց : Ա Ե Ւ Խ Ա Ր Ա Ւ Խ Ա Ն Լ յ ա բ Դ Ր Յ Ե Բ Դ Ր Յ Ի :
 Օ ի որպէս յարեգակն պշնուշն պակա-
 սումն ընձեռէ աչաց հայեցողին , նոյնպէս
 և աւելի քան զափին յառել՝ ի խորս զիտու-
 թեան Ա ստուծոյ՝ շլացումն մտաց աչացն
 բերէ . վասն զի որչափ էն Ա ստուած տե-
 սութեամբ , և զօրութեամբ , և սքանչելա-
 գործութեամբ , զոր ոչ կարէ ոք հասանել .
 որ և Հ րեշտակաց անհասանելի է , թող թէ
 մարդկան : Լ յ է ս . 151:

Ա Ս Տ Դ Ի Կ , ASOLICK .

in the tenth Century .

Ա յ ս պէս և բանիւ ստոտուեալ բանա-
 կանքս զկնի գալստեան Շամնին մարմնով յաշ-
 խարհս՝ գրական տառիւք պատմադրեցին
 զանուանս և զժամանակս թագաւորաց , և
 զամենայն գործեալսն՝ ի ժամանակին ար-
 ժանիյիշատակի : Ո րպէս և Հ մ ա ր ի տ թ ու ո ղ ն
 ժամանակաց Լ յ ւ ս ե ր ի Պ ա մ փ ի լ ի ա՝ ս կ օ ւ ե ա լ
 'ի մարդն առաջին՝ յորժամելնա արտաքս
 'ի վայրէն վայելութեան , աւարտաբանէ՝ ի
 քսանեմեակն Կ ո ս տ ա ն դ ի ս մ ո ս ի մ ե ծ ի թ ա-
 գ ա ւ ո ր ի : Լ յ ւ զ կ ն ի ն ո ր ա Վ ո կ ր ա տ է ս : ' և ա ն
 ա յ լ ե ս ա ն մ թ ի ւ ք ե ն ' ի մ է ջ Շ ո ւ ն ա ց ս լ ա տ մ ա-
 գ ի ր ք : Շ ա յ ց ս ո ր ա ե ր կ ո ւ ք ս՝ ո ր պէս զ լ ո ւ ս ա-
 ւ ո ր ք գ մ ե ծ ա մ ե ծ , ք ա ն զ ա ս տ ե ղ պ ա ռ ա ւ ե լ ո ւ ն
 պ ա յ ծ ա ռ ո ւ թ ե ա մ բ : Ի ս կ լ ը ս տ Հ ա յ ո ւ մ ն ' ն ա խ
 ա ռ ա ջ ի ն ք ա ջ ն Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս , ո ր ն ո ր ա ս
 ք ա ն չ հ ր ա շ ի ց և չ ա ր չ ա ր ա ն ա ց ս ր բ ո յ ն Պ ր ի

գորի , և աստուածածանօթութեամսս մերոյ
է պատմիչ : Եւ զկնի մեծն Առվաշէս՝ հան-
դոյն Խւսեբեայ , որ Վերթողացն անուանի
հայր : Եւ սպա Եղիշէ վարդապետ՝ որ վասն
Ա արդամանաց , և սուրբ Վահանայիցն չար-
չարանաց և կատարման : Եւ զկնի Պաղա-
րու Փարակեցոյ ճարտասանի պատմութիւն :
Եւ Փոստոս , որ և Բիւզանդ : Եւ պատ-
մութիւն Հերակլի՛ որ 'ի Աերիոսէ Եպիս-
կոպոսէ ասացեալ : Եւ պատմութիւն Պե-
տոնդ Երիցու՝ որ ինչ վասն Տաճկաց ելիցն ,
և անցից Հայոց 'ի նոցին բռնութենէ :
Հուսկ յետոյ 'ի վերջին աւուրս պատմու-
թիւն Ը ապհոյ Բագրատունոյ , և Տեառն
Յովհաննիսի Հայոց կաթողիկոսի , որք առ-
ժամանակօքն Աշոտոյ և Ամնատայ առաջին
թագաւորաց Բագրատունեաց : Արդ՝ յա-
մենեցունց 'ի սոցանէ՝ իբր 'ի լայնալիր մար-
դաց , և 'ի հովտային լերանց հաւաքեալ
ծաղիկս հրաշալի աչաց հայելոյ՝ գեղեցկա-
դոյն դունովքն , և անուշահամ հոտովքն՝
բերեալընծայ մատուցանեմ աստուածասէր
անձին , և հարցասիրական խորհրդոց քոց .
'ի հարկեցուցանող հրամանէ քո ստիպելով ,
ամէնիմաստդ յիմաստունս՝ աստուածազարդ
և առաքինազարդ վայելութեամբ գերա-
սլատուեալքան զընաւս՝ Տէր Աարդիս : Արդ
սկիզբն արաօցուք սկզբանս՝ յորում նախու-
հայրն մեր եւ արտաքս 'ի դրախտէն : Պատմ.
գիրք . ա :

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ, GREGORY MAGISTER.

in the eleventh Century.

Այս լուայ, եթէ Աստուծոյ փոխանդ
մեր տուեալ է ձեզ Արիստոտէլ, կամիմք
թէ առաքէք զգա մեզ: Վանզի նախ պարտ
է զբքերականութիւնն հանդերձ թարգմա-
նութեամբն ուսանել տիրապէս մակստա-
ցականութեամք, և զինի այսր զհուետո-
րականն երիւք հանդիսիւքն անսղալ տրո-
հութեամբ, և ապա զԱմանացն պարունա-
կել և Պղատոնական և Արիստոտէլական:
Եւ դարձեալ Պիւթագորական կարակնա-
կերտութեանն բացորոշմանց և դատողու-
թեանց: Խախուստ քան զայսոսիկ կըթե-
ցելովք՝ ներկուռ վերծանութեամք զհին
և զնոր կտակարանս: Եւ Առասպելավոր-
ժութիւնս 'ի բազում և զանազան տեղիս
զեղեալ, զոր քննութեամք արտայայտել հա-
ւանիմք: Եւ 'ի խոյզ ելանել ջերմագոյն և
քաջողջական խոհականութեամք և տրամա-
բանական հատուածոց Հոմերական և Պղա-
տոնական նախասականին, և այլոցն բոլոր
արհեստիցն և մատենից: զի յամենայնի Եւ
մաստասերն խոստովան լիցի զգիտութիւն,
և ուրացեալ զանգիտութիւն. մանաւանդ
ըստ կարողութեան քառիցն արհեստից՝
ինուական, Երաժշտական, Երկրաչափա-
կան, Աստեղաբաշխական: Այսոցիկ հետե-
ւել բաւական է այս իսկ, եթէ Արիստոտէ-

լի հաւաքմունքդ այն է՝ որ ասացեալն է, յա-
 ղագս Երկնային մարմնոյն, և դնդատեսու-
 թեան Երկրի, կամ յաղագս օրինադրութեան
 կենցաղոյս. յորս յիշատակէ և զորակու-
 թեանցն քակտումն, և զախտիցն բաժան-
 մունն՝ զոր անուանեն խորհրդական։ Ա-
 ռաքեալ այդը զգա։ Ապա Եթէ միայն Պոր-
 փիւռի առասութիւնքն իցէ, բացորոշեալ
 'ի ինդրոց Վախտաւորին՝ չնդից ստորոգու-
 թեանցն, որք են այսոքիկ. Աեռ, Տեսակ,
 Տարբերութիւն, Քատուկ, և Պատահումն.
 կամ Եթէ ութիցն, որք են՝ Վիտաւորու-
 թեանն, Պիտանացուն, Պատճառս մակա-
 գրութեան, Կարգն, Ա արդապետական Ե-
 ղանակն, Թէ առ ինչ մասն տարբերումն:
 կամ զիւրն Ատագիրացոյն՝ Գոյացութիւն,
 Արակ, Վանակ, Առինչ, Աւը, Երբ, Կալ,
 Անել, Առել, Արել, Այսոքիկ ոչ են մեզ
 ըզձալի 'ի հեռաւատանէ զսոսա ինդրել, քան-
 դի տրամադրութիւնքս այս վաղ ուրեմն պա-
 տահեաց մեզ, մինչ տակաւին պատանեակ
 եղելոյ։ Խակ Եթէ որչափ ջան եղեալ՝ ոչ
 խոնջանս վարկանել սակս տռփելոյն յաւետ
 այսպիսի ժողովմանց՝ որոց տեղեակ եք դուք
 'ի Պարսկականէ անտի, և յիսմայելացւոյն,
 և այժմ Քունաց անդանդաղ քառիցն ար-
 հեստից հետեւաքար մասին ինչ տեղեակ լի-
 նել։ Վանզի յայսոսիկ կըթեալ զմեզ՝ վե-
 հաղոյն վարկանէի անկողսպտելի և անծան-
 քագոյն ըստանձնել քան զամենայն ինչ՝ որ
 'ի կենցաղումն ազնուագոյն։ Խակ Եթէ զայ-
 սոսիկ խոկասցիս՝ մինչ տակաւին առոյգա-

ցեալ ես, և զներտս տրամիքս խոկաս կակղա-
ցուցանել, յարիսս այս օդտեսցիս սլատուա-
սիրեալ, 'ի բարեաց զբաղեալ, հեղատեսակ
և առաքինագոյն մակացութեամբք զերծեալ
յեռամնակ տապոյ՝ անաշխատաբար այսո-
քիկ լինին քեզ: ՚Պանզի և յսկզբանն իսկ
ամենագերագոյն և տենչալի տեսական փառ-
տականին իւրոյ յորդորմանէ յայսոսիկ վա-
րեցելոյ գեղեցիկ իմն մոլութիւն և ողջա-
խոչ մտածութիւն, գրէ և նախ քան զայ-
սոսիկ միով մատամիք ճաշակելոցն այսու,
պատահեալ է ամենայն կենցաղականացս
բորեալ մնա առացեալքն: Իսկ եթէ կըր-
թեալ էր քո յայսմ ստադին մրցանակի, և
վերծանեալ զյոդնախումք հոյլս հանդիսա-
ցելոցն զայսոսիկ, և զպարկեշտութիւն նո-
ցա, և զառաքինատեսակ և զնորագոյն բա-
նաստեղծութիւնն, և զկատարմունն, ոչ
միայն ըղձալի լինէր քեզ, այլև զբոլորս ախ-
տական և յածողական իննդրոյն արտաքոյ
մղեալ զքեզ՝ զկնի իւր ձգէ. զի ամենեիմք
անաշխատաբար ախտիցն է արտալածիչ: ՚Ի
նշնին առ աշակերտն իւր իւրսէղ և կաշէ:

Համարձակիմք միշտ, սովորեալ յառատա-
ձիր պարզեւս՝ զկարեւորմն և զպիտանացումն
յարտեական բաշխելով քեզ՝ որ ոչդ երբէք
դանդաղիս, զգիրս ՚Նանիայի Շիրակայն-
ոյ, որ բազում աշխատութեամք և յածա-
չու խոնջմամք հաւաքեալ 'ի բազմազան և
յոքնարեղուն մատենից: ՚Յորում և ենթա-
կայացեալ են ոչ միայն քառիցն արհեստք,
այլ բոլոր էակացն խոկմունս. որ են այժմ

՚ի տան տէրունեան . զոր նախ քան զքեզ՝
 խըթնացեալ և թագի , ընդ գրուանաւ ծած-
 կէին : Օ որ և ինքն իսկ որ մատենագրեաց
 զայդոսիկ , յառաջնում իւրոյ տրամաբա-
 նութեանն բաղում տարակուսանս և կեղեր-
 ջականս սակս մերոյ ազգին անփոյթ առնե-
 լոյ զսյդպիսի գործառնութիւնս : Հորում
 մթերեալք են տոգորք աստուածային , և
 ենթակայացեալ ամենայն արհեստք մակա-
 ցութեան : Խւնախաղասեալ է թուականու-
 թեանն և երաժշտականութեանն՝ որք են
 ՚ի տարրորչ քանակի տարակացեալք : Խակ
 երկրաչափութեանն և աստեղաբաշխութեն՝
 որք են ՚ի շարրւնակ քանակի : Խւ զկնի այ-
 սոցիկ յարամանեալք արհեստք , և մակա-
 ցութիւնք , մատենագրութիւնք . և գրէ եթէ
 ամենայն բոլոր վարժումն հռետորական :
 Այսպէտե մասնաւոր զփոշետեսակսն զօ-
 րէն գործասէր մեղուի ամբարեաց ՚ի մեղ-
 ուանոցի այդք ՚ի բազմավէալ մատենագրաց
 ՚ի աղդէացւոց և Հունաց և ամենայն աղ-
 դաց , առ ՚ի ծանօթ լինելոյ որ նախ քան
 զայսոսիկ հաւաքեալն մատեանս , մակացու-
 եղեալ իմաստասիրութեան : ՚ի անզի որք
 ոչ նախուստ կրթեալք են բոլորովին , ոչ
 գոյ հնար թեւակոխել զայնպիսի աստուա-
 ծաբանութիւնս . քանզի պարտ է նախ ՚ի բը-
 նականէն յուսումնականն ամբառնալ , և ան-
 տուստ յաստուածաբանականն : ՚ի անզի որ
 այլազդ խորհեսցի , ըստ ասացելումն տրա-
 մախորհիկ՝ ՚ի վերայ լլոմնլիոսի դնել զլես-
 տոս , և յայնը յարաբարդել զտերեւաշարժն

Ծախոն , որպես զի Երկին Ճեմարան լիցինո-
 ցա . քանզի յոյժ տարախորհիցն և անտխական
 մտածութեանցն է բաղձումն այս : Ա ասն
 որոյ և Պղատոն իսկ զգուշացուցանէ այս-
 պէս յիւրումն Աստուտօւծաբանութեանն՝
 Աներկրաչափ ոք մի ներամտեսցէ . զայսո-
 սիկ ասելով՝ զի մի ոք անկատար 'ի քառիցն
 ենթակայէ , մոցէ 'ի լսարանն : Քանզի բը-
 նաւորեալ էր հրաշալին այն , միայն աստ-
 ուածաբանութեանն սլարապել , և յայնոսիկ
 զկրթեալն հաստատել . ըստ օրէն հիւսանց՝
 որք արհեստին են մակացուք . ոչ նախուստ
 յանտառս կամ 'ի մայրս Ճեպեն հատանել
 փայտս . քանզի այլ ոք են սլարապեալ այ-
 նոցիկ , և այլ ոք հարթեն և սղոցեն . և ա-
 պա ծայրագոյնքն Ճախարակօք և այլով գոր-
 ծարանօք գերապանծ զնոսա յարդարեն ,
 գահաւորակս , և աթոռս , և այլ ինչ գործա-
 բանս : Այսպէս և որք ոսկւոյն են պարա-
 պեալք , և երկաթոյ , և սղնաձոյ : Եւ արդ՝
 քանզի սակս մատենին Անանիայի եղել յի-
 շատակ իմաստասիրելոյս մեզ , բեր , ոչինչ
 խրթին և անյայտաբար կամիմք զհայցուածս
 մեր ծանուցանել մերոյ Առաւորչիդ : Դ
 բազմաց անփոյթ եղելոյ՝ այսպիսի գործառ-
 նութիւնք և հանդէսք , որք ոչ երբէք 'ի
 ստադին վարժելոց գրամարտկոսաց և քեր-
 թողաց հնացեալ՝ 'ի մոռացումն այսսիսւոյ
 մատենի ոչ միայն եղել անկանել , այլեւ բազ-
 մաց . որպէս 'ի մերոյն Առվսիսէ ուսեալ
 գտաք , և յայդմ մատենի մակագրութեան
 վերծանեաք : Քանզի Արամեան սերի հը-

պլարտութիւն, և անամոք բնութիւն, և խըս-
տապարանոց բարս՝ ոչ ստորակայի յայսոսիկ
կըթութիւնս յարատեւ էկան հաւանել, իսմ
եթէ ոչ փոյթ՝ որք պետականին հասին բաղ-
դի, մեծարու լինել, և խուզել զխոհեմա-
կան արհեստս 'ի զարդ քարդոնոսական ա-
պարանին՝ որպէս մեծն ֆոլոմէոսն այն, և
որք այլք այդպիսիք: Եւ զի բազում աշ-
խատութեամք խոնջեալ, և տագնապեալ՝
մինչ տակաւին յիմնումն անտիականն ելով
տիս, հազիւ հազ մակացու այսմ եղեալ,
սուղի ինչ էակացն հասեալ՝ ըստ որում են
յլը բաբացւոց, և Վաղդէացւոց, և Յու-
նաց, ոչ դանդաղեցայց քննութեամք զփորձ
առնուլ: Եւ ինսդրեմք 'ի քումմէ լուսա-
փայլութենէդ՝ զնորագոյնն մատեան չնոր-
հել մեղ. զի այժմ մերձ 'ի ծերութիւն հա-
սեալ եմք, և դիւրին վերծանեալ հասցուք
ըստ կարողութեան. զի մի յերկոցունց կող-
մանցն ունիցիսմք մարտակցութիւնս՝ տեսու-
թեան, և մատածութեան. քանզի լուսով քով
տեսանեմք զլոյս: Ապա եթէ՝ ոչ այսոքիկ
հաճոյ թուեսցին քումդ Աստուածովետա-
կան իշխանութեանդ՝ զօր և կամեսցիս, այն
իբր յառտուածուստ պարգե համարեալ է
մեզ: 'Եւ բաղն առ Տեր Պէտքս Կանուշին:

Ա ասն զի ոչ եմք երբեք գադարեալ 'ի
թարդմանութենէ, ևս բազում մատեանս
զորս ոչ եմք գտեալ 'ի մեր լեզուս: Օ եր-
կուս մատեանսն Պղատոնի՝ զԾիմմոսի տրա-
մաբանութիւնն, և զիշեդովնի. յորս բոլոր
ձառսն նախագիտականին այն պարփակեալ

կայ . և զայլս բազումն յիմաստասիրայն : Եւ-
րաքանչիւր մատեանքս այս մեծադոյն է , քան
զտարեռը տօնականս : Շայց և գտեալ մեր
խկ 'ի հայ լեզու գրեալ իմարդմանչացն
զգեր Ողոմպիոդորոսի՝ զոր Պաւիթ յիշա-
տակէ . կարի յոյժ սքանչելի և հրաշալի
բանաստեղծութիւնս մակաւասար բոլոր ի-
մաստասիրական բանից : Պատեալ եմ և զիա-
լիմաքոսի , և զինդրոնիկեայն 'ի հայ լե-
զուս : Շայց և զերկրաչափականն զիշելի
դոսին սկսայ թարդմաննել : Եւ եթէ տա-
կաւին կամեսցի Տէր երկարանալ մեզ 'ի
կենցաղումն , բազում հոգս յանձին կա-
լեալ՝ զմնացեալսն բոլոր Յունաց և Յասոր-
ւոց թարդմաննել ոչ դանդաղեցայց : Եւ
կարօտիմք քեզ մերձելոյ մեզ օգնականու-
թեամբ այսպիսում իրողութեանց . ապա
թէ ոչ աղօթիւք օգնեսցես մեզ : Պանազնն
առ Ապրանդէտն Ապրիւ :

Առաք թէ եկ՞ն՝ Պապ՞ն սրադակ ,
Արդանասասար՝ ըն սլիսակ .
Գիշերաբուն՝ Շաղղարաց ,
Սպիտակափառ՝ ըն գեստրաս :
Երարադեան՝ ըն գագաթն ,
Եւ կոնդրային՝ ըն կատար .
Պատադըրոս՝ ըն Պրակսիս ,
Շեք գիշերեան՝ ըն ձեմող :
Եւար առող՝ աւերող ,
Ատահամբաւ՝ Ափկողայ .
Աղէ զինեա՝ զինուորեա ,
Սպառազինեա՝ դու վառեա :

Արիաբար՝ դու մըցեա,
 'Ի հանդիսի՝ ըսդատին.
 Անամարտիկ՝ ըն վառիս,
 Որ մերկանդամ՝ մարտընչէր:
 Փիղս արժանի՝ անկառի,
 Վեզ՝ ի դիմի՝ հարկանի.
 Արջ անտառի՝ շիկորակ,
 Վեզ մարտընչել՝ հանդիպի:
 Արդ մի լարեա՝ դու պընդեա,
 Օլայնալիձ՝ հայրենին.
 Օերեքթեեան՝ ըն մըխեա,
 Յառաջ մատիր՝ և քաղեա:
 Ահա քեզ Բելայն՝ հաս հանդես,
 Եւ Ծառգոմեան՝ ըն Հայկայ.
 Ահապարեա՝ և փութա,
 Օի Ես Կադմեանն՝ Արամեան:
 Ահա հըռոսակը՝ աձեցին,
 Ահա հասին՝ քեզ Վաղդեայք.
 Այլ դու Տերամք՝ զօրացիք,
 Եւ Յիսուսիւ՝ պարծեցիք:

Ա'զէ առ ընթերցիք զարհեատ Ոտանաւորացդ: Դիւցազնական է տաղդ՝ քաջ ու լորեալ, և տաղ պղպղուն, օղուն, և զեղուն, եռակի վանդօք շարակայեալ. զի հոյծ, կատարուն, շարժուն: Աչ վիժեալ զծի, ոչ նուազեալ յօդի, ոչ փոփոխեալ տառին. կարեկցաբար առ իս ձգելով զձայնակիցսն ստուգաբանութեամք. և շարակացուցեալ շորթելով՝ կամ ճողովրելով: 'Ի Առաջնաւուն ուն:

Օիմրդ զմենց ոմանք կասկածեն յիմաստ.

նոց ձերոց, իբրու թէ թարգմանեալք 'ի
ձենջ. զիարդ հզօրագոյն ելով քան զմեզ;
Ասեմք առ այնոսիկ, թէ այսոքիկ ոչ իրա-
ւացի տարակուսանս զտեղի կալցի առաջի
մեր: «Քանզի թարգմանեալք 'ի Պտղոմէո-
սէ՝ ոչ 'ի Հոյնս գտեալ էր զամենայն: Որ-
պէս և Հոյնք յիշրայեցւոց, և 'ի Քաղ-
դեացւոց, և յիշմովսլացւոց: «Քանզի առ
Հոյնս յուսումնականէն միայն յատուկ ե-
րաժշտականն ընաւորեցաւ, և զայլսն յայլ-
մէ թարգմանեալ և ժողովեալ: Իսկ մերոցն
արիական արանց, և առաքինսատէր իմաստ-
նոցն՝ թուի ինձ, եթէ յոյժ յաղթողք ե-
ղեալք ամենայն արհեստից և մակացու-
թեանց: որ վեհ ինձ նոցա հաւանիմ ելով
քան զյոդունցն շփոթաբանութեան ձերոյ
յալենական կարծեցելոցն: «Կաե այժմ ցու-
ցանէ 'ի նոցունց դպրութենէ մերս փանա-
քութիւն առ ձերն վեհագոյն՝ որ այժմ եմ
(թերեւ են) կարծեցեալք: Առ կիրակոս
Հոյն դպիք:

Երթան 'ի հեթանուքն, և խորտակեն զմէ հեանին.
Ըզօկոց արմատ բառնան, 'ի յարմատոյ Արտեմիդին.
Եւ զայլս Արամազդայ, զԱմիրոդիտայն և զՀերակլին.
ԶՀերմէս և զԱպուրն, և ըզօկունոս կլեալ զորդին.
ԶԱմոն զԵրիպտացին, և զԴեմետր Աթենային.
ԶԱրէս մարդախուռ, և զԱքելաս Հոմերոսին.
ԶՀեփեստոս դըտակն հրոյ, զիւր խեղ զանդամն 'ի
(գարբնոցին.

Եւ այլ բազումք են յանուանէ, չար պաշտօնեայք
(կըռամոլին.

կամ զՃնունդքն Աւմելայ, ըզանթօքըն ցանկացողին.
Ոմանց հուրըն բագին, աշակերտաց Զբադաշտին.

ԱՐԵՍՏՈՅՆ աստեղանի , Սարէական Քաղցէացին .
Եւ այլքն հմայելով , հաւականաց սև երաժին .
Մկան Երկրպագեալ , զադիսն առեալ եղին բագին .
Կազնի ծառ պաշտէին , կազմամախի ծունը ածէին .
Սօսոյ նուիրէին , և կենդանի անդ զոհէին .
Այսպիսի մոլորէին , և խաւարեալ աղջամղջին .
Արդ զայս հանեալ քեցին , և ճշմարիտ լոյս ծագեցին :
Ճպանառուն :

ԱՐԻՍՏԱԿԻՍ ԼԱՍՏԻՎԵՐՏԵՆԻ ,

ARISTACES LASTIVERTENSIS .

in the eleventh Century .

Յայնժամ մի ոմն զօրաւոր 'ի զօրացն Հո-
ռոմից՝ սլատրաստեալ հուր նաւթիւ ծծըմ
բով , և արկեալ յամնն ապակեղէն , և նրա-
տեալ 'ի վերայ ազնիւ Երիվարի՝ քաջասիրտ
և արի գոլով , վահանաւ միայն զթիկունս
ամրացուցեալ , և ելեալ ընդ դուռն քաղա-
քին , մնանէ 'ի բանակն այլազգեացն՝ Ման-
տատօր ձայնելով զինքն . և Երթեալ մինչեւ
'ի բարանն , շուրջ անցեալ զնովաւ , և յան-
կարծակի 'ի վեր առեալ զշիշն՝ Ե՛հեղ 'ի վե-
րայ բարանացն . և նոյնժամայն բորբոքեալ
հրոյն՝ բոց ծիրանի 'ի դուրս ելաներ . և
ինքն դառնայր փութապէս : Պատճ . Գլ . ՃՂ :

Երդ՝ վասն զի Ճարանց (Երաց) ամսոյ Ե՛
հանդիպեցաւ դնել զգիր թառականութեան
Հայոց ազգիս 'ի ձեռն Ե՛նանիայի Ը իրա-
կացւոյ 'ի տասներորդի ամի աթոռակալու-
թեան Տեսան Ճովհաննիսի Հայոց Կաթո-

ղիկոսի , որ ի՞դ . թիւ էր Հայրապետացն 'ի սրբոյն Գրիգորէ , և 'ի ի՞ե . ամի Ըուստիանոսի կայսեր 'ի հիմնարկութենէ մեծի եկեղեցւոյն սուրբ . Առփեայ , և 'ի ի՞ե . ամի Խոսքովու Պարսից արքային : Արդ յայսմտարւո՞յնը յորում զիմուականն եղին ըջչղ ամէր յ գամայ մինչև 'ի Հայ յօւականն . և 'ի ծննդենէն Վշի մինչև 'ի սրբոյն Գրիգորի ելն 'ի վիրապէն ամք մհջղ . որ լինի 'ի ծնընդենէն Վշի մինչև 'ի Հայ յօւականն ամք չծը : Ըստ աննէս Ապրիաւագ :

ՄԱՏԹԵՈՒՍ ՈՒՌԻԱՅՑԵՑԻ ,

MATTHEUS URHAENSIS .

in the twelfth Century.

Եւ յայնժամ ելեալ Գագիկ յերեսաց թագաւորին , և մեծաւ փառաւորութեամբ գնացին յաշխարհն իւրեանց : Եւ գայր խաղայր Գագիկ շահն , և գայր հասանէր մինչև 'ի կեսարիա քաղաք Գամրաց . և որպէս էր յառաջագոյն զայրացեալ ընդ Ըունաց , և արձակեցաւ 'ի վերայ ԱՌետրապօլտին կեսարու մեծաւ սրտմնութեամբ . որում անուն ասէին Արքոս . վասն զի էր յոյժ հերձուածող և հայհոյիչ չար և պիղծ հերետիկոսն Արքոս . և այնչափ լրեալ եղեւ անօրէնն Արքոս , մինչև զիւր շանն անունն Արմէն կոչէր : Եւ յառաջ ժամանակաց զայտ ամենայն լուեալ էր Գագիկ արքայ Հայոց ,

և էր յոյժ զայրացեալ յոյժ ցասմամբ . բայց
 'ի մէջ հուռմոց էր , ոչինչ կարէր առնել :
 Եւ էր Ա'ետրապօլիտն անուանի և մեծ և
 ահարկու ամենայն տանն Հունաց , բայց
 հայհոյիչ էր յոյժ ազգիս հայոց , և ամենայն
 շան Աքմէն կոչէր . նաև այլ անպատմելի
 սուդ էած հայոց յորժամ լուաւ , եթէ կա-
 մի թագաւորն զորդիք թագաւորացն հո-
 ռոմ կնքել : Եւ ընդ որ գնայր Գագիկ՝
 ամենայն իջևանսն հրամայեաց ամենայն զօ-
 րացն հայոց խայտառակել զփառաւոր կա-
 նայմն հոռոմոց . և այնիւ նախատեաց զնո-
 սա : Ա ասն զի խորհեցաւ այլ ոչ մտանել
 ընաւ . ի կոստանդնուպօլիս , այլ խորհեցաւ
 գնալ առ Աքասլան Առլուտանն Պարսից , և
 տիրանաւ աթոռոց թագաւորութեան տանն
 հայոց . զի բազում անդամ կոչէր զԳագիկ
 Առլուտանն , և նա յաղագս քրիստոսական հա-
 ւատոյ արքելեալ լինէր : Իսկ Գագիկ յոր-
 ժամ մերձ եղեւ առ Ա'ետրապօլիտն՝ կամե-
 ցաւ զիջևանս առ նա առնել : Եւ դնացին
 Առիրապետքն , և ասեն ընդ հերիտիկոսն
 Ա'արկոս , եթէ Գագիկ արքայ հայոց առ
 քեզ կամի իջևանել այսօր Եւ լուեալ Ավո-
 Ա'արկոս՝ և եղեւ ուրախ . և հրամայեաց
 զարդարել զամենայն տունն իւր , և 'ի կա-
 մայ և ոչ կամայ ելանէր ընդդէմ Գագիկայ
 հանդերձ քահանայիւք , և մեծաւ փառաւո-
 րութեամբ բերեալ իջեվանէր զնա 'ի տունն
 իւր . և արար Ա'արկոս ուրախութիւն մեծ:
 Բայց Գագիկ կայր յոյժ զայրացեալ ամե-
 նայն զօրօքն . և իբրև սկսաւ ուրախանաւ

ընդ գինեաւն , յայնժամսկսաւ ասել Գառ
 դիկ ցիւռ Արկոսն , եթէ լուեալ է իմ ,
 եթէ քո շուն զօրաւոր կայ , և կամիմք տե-
 սանել զնա : Եւ գիտացեալ Արկոսն , թէ
 կամի ուղել զնա իւր , և զանց արար զբա-
 նիւն : Եւ յորժամ կրկնեաց զբանն Գագիկ ,
 կուեցին զշունն . և նա ոչ դայր . քանզի զա-
 նունն ոչ համարձակեցան ձայնել Ռմէնն :
 Եւ ասե Գագիկ . զիւր անունն ձայնեցէք
 որ դայ : Եւ յայնժամ Արկոս յաղթահա-
 րեալ 'ի գինոյն , և ձայն տուեալ շանն ա-
 սեր . Ռմէն Ռմէն : Եւ եկեալ շունն
 նմանեալ առիւծու , և տեսեալ Գագիկ ա-
 սե . Ռմէն կոչի շունս այս . և ամացեալ
 յոյժ Արկոս ասե . Անուկ է , վասն այնը
 ասեմք իւր Ռմէն : Եւ ասեր Գագիկ ,
 այժմ տեսանեմք թէ ով է մանուկ Ռմէն
 թէ Հոռոմն : Եւ մեծ քուրձ մի պատրաս-
 տական ունեին , և ակնարկեաց Գագիկ ,
 և յայնժամ հետեակըն պատեցին , և մե-
 ծաւ աշխատութեամք արկանեին զնա 'ի
 քուրձն : Եւ տեսեալ կիւռ Արկոս , և գի-
 տացեալ եթէ զշունն կամին զհետ իւրեանց
 տանիլ , սկսաւ բարկանալ և մեծամուել 'ի
 վերայ պաշտօնեիցն : Եւ ժպտեալ Գագիկ ,
 և ձեռամքն արարեալ սպասաւորացն , և
 յայնժամ ընդ չորից կողմանցն պատեցին
 զանօրէնն Արկոս . և պաշարեալ զնա , մեծ
 բոնութեամք և չարչարանօք արկանեին զնա
 'ի քուրձն առ Ռմէն կուեցեալ շունն : Եւ
 յայնժամ ասեր Գագիկ . տեսանեմք թէ
 ով է զօրաւոր , մանուկ թէ Հոռոմ Աետ

բարօլիտն : Եւ հրամայեաց Գագիկ սաստ-
կապէս ուժդին հարկանել զշունն : Եւ նո-
րա զայրացեալ արձակէր 'ի վերայ Վարկո-
սի , և լափէր զնա ատամացի . և զմեծ մասն
աւուրն այնպէս հարկանէին շանն . և բար-
կութեամք հեղոյը զարիւնն պիղծ՝ հերետի-
կուին Վարկոսի . և ձայն ուժդին , և աղա-
ղակ բաղում ելանէր 'ի Վարկոսէն : Եւ
այսպիսի օրինակաւս պատերազմ ահաւոր
կայրյատակ քրծին , և կրծտումն ատամանց
և հառաջումն սրտին ելանէր 'ի խորոց քըր-
ծէն : Եւ այսպէս չարեաւ սատակեցաւ չոր
և պիղծ հայհոյին , և եղեւ կերակուր շանց :
Այսունութիւն :

ՍԵՄՈՒԵԼ ԵՐԵՅ , SAMUEL PRIEST .

in the twelfth Century.

Յադամայ մինչեւ ցջրհեղեղն գումարին
ամք բնամիսք . 'ի ջրհեղեղէն յաշտարակն՝
ամք չիեւ . և անտի ցլքը ամմ՝ ամք նժէ .
և 'ի ջրհեղեղէն ցլքը ամմու ծնունդն՝ ամք
ջխը . և 'ի յլքը ամմէ մինչեւ 'ի Վովսէս
յելսն յլցիպտոսէ՝ ամք չեւ . և յելիցն մին-
չեւ ցլքը մինն , և ցաւածին շինուածն տաճա-
րին՝ ամք նժ . և յաւածին շինուածոյ տաճա-
րին յերկրորդ շինութիւնն՝ ամք շժառ . և ան-
տի 'ի ծնունդն՝ Քափ ամք՝ շժը : Որոց շա-
րադրութիւնն լինի ամք բնշղը : 'ի ծննդե-
նէն՝ Քափիստոսի մինչեւ 'ի սուրբ Գրիգոր

ամք յժք . և անտի 'ի Ծառականն ամք
միստ : Պապութեան :

Աստանօր լցեալ լինին տմք 'ի ծննդենէն
Վարդի շնդգ . յորում և բովանդակեցան կանոնք
մէկին Անդրեասայ . զորոյ զինի կարգեցաւ
Ծառականս Հայոց այսպիսի պատճառաւ :
Ելրման մէկին լրումն Օ ատկին 'ի Ար-
տի ին էր , և յսկզբանն յԱպրիլի դր . և վասն
զի ոչ 'ի սկիզբն կարացին գնալ , զի յետ ին-
ին Արտին ժդ էր Ապրիլ , և թ լրմունք
'ի մէջ , և այնը աղադաւ սկսան շփոթիլ տօնք
ամենայն , և արհեստք իրողութեան՝ որպէս
ասացաւ : Ապա իմաստունք ժամանակին
(Առ Առվաես կաթողիկոսիւ) 'ի միասին
եկեալ կարգեցին Ծառական Հայոց , որով
ուղղեցին զ Օ ատիկն Տեառն այլովքն հան-
դերձ . բայց ոչ կարացեալ 'ի ճշմարտութեան
կալ անսղալ զամն թ : Խակ 'ի ժերորդ
թուականին Լաս անուն իմաստուն մտօք
ժողովեաց առ ինքն արս կորովամիտս և հան-
ճարեզս ; և կարգեցին զանտարակուսելի ո-
րինակին՝ որ չեակն կոչի : Այս է պատճառ
Ծավականին Հայոց . զօր 'ի կարգ կանոնացս
յարմարեսցուք վասն դիւրահասութեան ժա-
մանակաց : Անչե ցդիր Ծառականիս մե-
րոյ ուղղեալ էր սուրբք վարդապետին իմոյ
Վեորդայ ըստ Վրոնիկոնին զնահանջն , և
ասէ . Տեսի 'ի չեկին զգիր Ծառականին
առաջին ամն նահանջ . ոչ գիտելով զգիարդն ,
թողլով աստի և յառաջ ըստ գրեալսն :

ՆԵՐՍԻԾ ԿԼԱՅԵՑԻ, NIERSES CLAENSIS.

in the twelfth Century.

Երդ ըզբնութեամք՝ քո հայր յերկին,
 Օոր մեզ ետուր՝ չնորհիւ քոյին,
 Տուր ինձ կարդալ՝ բոլորովին,
 'Ի սուրբ սրբտէ՝ զանուն նորին:
 Արքայութիւն՝ Տիրականին,
 Դայցէ տիրել՝ իմոււմն անձին:
 Եւ յերկրաւորս՝ առ իս լոցցին,
 Կամք նորա՝ որպէս յերկին:
 Օ հաց առօրեայ՝ և զմիշտ էին,
 Օ մարմնոյս դարման՝ և ըզբանին,
 Տացէ առատ՝ կարօտն անձին,
 Օ իմանալին՝ և զըգգալին:
 Ուողցէ զյանցանս՝ իմում պարտին,
 Որպէս և ես՝ պարտապանին.
 Կամ մանաւանդ՝ թէ զերկոսին,
 Ուողուլ տացէ՝ զի ինձ թողցին:
 Եւ մի տացէ՝ թոյլ փորձողին,
 Փորձել ըզծոյլ՝ որպէս զարին.
 Այլ պահեսցէ՝ 'ի սրոյ նորին,
 Ինձ մարտիցէ՝ ընդդէմ շարին:
 'Ի ՞ ՞ ՞ ՞ ՞:
 Եւ որք 'ի բանս՝ Աստուածային,
 Օ որ չնորհեցեր՝ յիմարս անձին,
 'Ի լընթեռնուլն՝ աշխատեսցին,
 Եւ յաղօթել՝ ըն տաժանին,
 Ընորհեան նոցա՝ զաղօթելին,
 Հատո՛ ըզվարձս՝ աշխատողին:

Ա զս տուր աչացն՝ որ նայիցին,
 Ա պրեա զլեզուս՝ որք վերծանին :
 Ա աւ ձեռամք՝ մակադրողին,
 Ա շւ ուղղապես՝ փոխարկողին :
 Ա յլ գոյիւք՝ ըստացողին,
 Ա պառնք բարեաց՝ 'ի քէն տացին :

Ե՞՞Դ :

Ա ախանձելի՝ մարդկան լինիս,
 Ա նե զվերոգրեալոդ՝ 'ի միտ ունիս :
 Ա կ բեր Ա անուկ՝ զունկըն քոյիս,
 Ա նուր և անսա՝ իմումբանիս .
 Բ արուն լինիմ՝ բրիմամբ սրբակիս,
 Ա լսուցանել՝ քեզ ըզբարիս :
 Ա իրեա զուսումն՝ որով պատուիս,
 Ա յերկնայնոցն՝ և 'ի յերկընիս .
 Ա բանելի՝ և մեծ լինիս,
 Ա թե զերկեղ՝ Տեառն ուսանիս :
 Ա իրոյ ՚ի բաց՝ լեր աշխարհիս,
 Ա շւ յլստուծոյ՝ սերըն վառիս :
 Ա նձ լուր որդեակ՝ հօր ՚ի խրատիս,
 Ա շւ յուսմանե՝ մի ծուլասցիս :
 Ա թե ՚ի յայս՝ սեր բորբոքիս,
 Ա նանց կենաց՝ ժառանգ լինիս :

Խրատ Աւառանականաց :

Ա ւ դու Հըռոմ՝ Ա պայր քաղաքաց,
 Ա երապայծառ՝ և պատուելի .
 Ա եծին աթոռ՝ ըդ Պետրոսի ,
 Ա ռաքելոց՝ Պըլսաւորի :
 Ա կեղեցիդ՝ անշարժելի ,
 Ա յեփայեան՝ շինեալ վիմի .
 Ա րաց դժոխոց՝ անյաղթելի ,
 Ա կնիք երկնից՝ ըն բացողի :

Արթ վայելուչ բազմաստեղեան ,
 Եւ հաստարմատ՝ տունկ Պաւղոսի .
 Առողելով՝ արեամք նորին ,
 Արպէս ըզդբախտն՝ որ յլոդենի :
 Ամսին հասեալ ըդ Ո ուկայի ,
 Աստուածային՝ Ատենագրի .
 Ահա առ քեզ՝ բանըս խօսիմ ,
 Ահճակ ու աթոռ՝ ըս թագեի :
 Անք Երեսի :

Արդ ՚ի ստորին՝ կողմաշխարհի ,
 Օ որ խօսեցաք՝ ըս շատասցի .
 Տայց բանըս մեր՝ փոփոխեսցի ,
 Յելս արեու՝ վերադարձցի :
 Առ մեծըն Հայք՝ տուն թարգոսի ,
 Ազգ և ծընունդ՝ ըն Յաքեթի .
 Անդ ուր աթոռ՝ Պարթևազանց ,
 Թագաւորաց՝ Արշակունի :
 Յորումէի՝ ՚ի սահմանի ,
 Յառաջագոյն՝ որպէս ասի .
 Դյլբարէ՝ թագաւորէ ,
 Եոցունց շինեալ ես լինէի :
 Եակ նըման՝ գոլ վիճակի ,
 Առաքելոյն՝ թագեսի .
 Յորմէ բըխեալ՝ ծաղիկ բարի ,
 Եւ շառաւիդ՝ գաւազանի :
 Դրիգորիոս՝ Պարթևազին ,
 Լուսաւորիչն՝ այնմ աշխարհի .
 Խոստովանող՝ ըն Վարիստոսի ,
 Եւ Արտիրոս՝ ըն կենդանի :
 Եւ արդ առ քեզ՝ բանիւ բերիմ ,
 Հայաստանեայցդ՝ եկեղեցի .

Յորում կաթեաց՝ շողն երկնային,
 Իզպաղն հալեաց՝ ըգհիւսիսի:
 Եոյն անըստուեր՝ ծաւալեցաւ,
 Եւ ձառագայթն՝ անձառելի.
 Ասստիկ եհար՝ ուռամբն ոսկի,
 Ձայնք հնչեցին՝ ստորինս երկրի:
 Ենդ հրեշտակաց՝ ըն բաղմութիւնք,
 Եկերկնից հեղան՝ ըստ հիւղեի.
 Եւ մարդկային՝ ազգ երկրածին,
 Ա երասլացան՝ յեթերն երկնի:
 Որ անապատն՝ էիր վայրի,
 Եղեր նըման՝ փթթեալ ծաղկի.
 Եւ կուսական՝ արեամբ ներկեալ,
 Պայծառացար՝ ի դոյն վարդի:
 Որդիս ծնար՝ յաւաղանի,
 Որ քան զաւազ՝ շատ է զժովի.
 Դիեցուցեր կաթն՝ ի ստենէ,
 Մնուցեր արեամբ՝ ըն կենդանի:
 Դաստիարակ՝ մանկանց բարի,
 Տալով զօրէնս՝ ըն Մովսէսի.
 Եւ կերակուր՝ կատարելոց,
 Օաւետարան՝ ըն Վրիստոսի:
 Ձայնժամէիր՝ երանելի,
 Եյսու ընաւից՝ դու ցանկալի.
 Երկնաւորացն՝ և երկրայնոց,
 Եւ կենդանեաց՝ բոլոր սեռի: — Ե՞՞՞
 Արդ որ տօնէք՝ խաչես հանդէս՝ Վրիստոսական,
 Դ գողգոթա՝ ահեսէք ըղձեղ՝ ի պաշտաման.
 Անդ ուր չիրիմն՝ եր Կափահոր՝ ըն հանդսուեան,
 Որ կանդնեցաւ՝ առեալ զւազ՝ իւր գաւաղան.
 Քանզի փոյտիւ՝ վիրաւորեալ՝ հինն այն Աղամ,
 Ակեալ դնէր՝ ի յայն խշին՝ տարտամութեան:
 Մեն. Շաբէր.

Ամեղական՝ գոլով բնութիւն՝ և սկզբնական,
 Յանեղէն՝ ձգեալ կամար՝ անցուգական .
 Անջրապետեմ՝ զջուրսն վերին՝ և ներքնական ,
 Որպէս պատմէ՝ զինէն Մոլսէս՝ Աստուածաբան :
 Եւ Էմ միլոց՝ ընդ անմարմինսն՝ և մարմինական ,
 Ունիմ առխօ՛յերկուց բնութեանց՝ ըն յատկական .
 Ըստ անմարմինոց՝ զո՞չ 'ի ձեռաց՝ շօշափական ,
 Եւ ըստ մարմինոց՝ գոլով աշաց՝ տեսողական :
 Միաստարեր՝ Էմ միագոյն՝ համանման ,
 Հինգերորդ՝ ծածկոյթ քառից՝ որոց ծնան .
 Անբանակ Էմ՝ և շափից՝ անչափական ,
 Այլ և թղաւ՝ միով շափիմ՝ թէ ոչ մարդկան :
 Պարունող Էմ՝ անըզգայնոց՝ և զգայական ,
 Պարունակիմ՝ յայլմէ Վեհէ անտեսական .
 Բոլորակ Էմ՝ կիսագունդ՝ որովէս խորան ,
 Բնութեամբ կոյուն՝ անձամբ շարժուն՝ անկայական :
 Հիմն և աւարտ՝ Էմ գոյութեանց՝ այս նիւթական ,
 Անդունդք՝ 'ի խոր, բարձունք՝ 'ի վեր՝ մինչ վերանամ .
 Ո՛չ ոմն անդունդք՝ ոմքն բարձունք՝ անփոխական ,
 Զի չեմ կայուն՝ և միշտ 'ի նոյն՝ սյլ շրջական :
 Այլ որ անդունդք՝ նոյն և բարձունք՝ են վերնական ,
 Եւ որ բարձունք՝ նոյն և անդունդք՝ Են ստորնական .
 Հարժիմ յաւէտ՝ թուշիմ արագ՝ անսահական ,
 'Ի շարժմանէ՝ թարթել ակամք՝ մի չկայանամ :

'Ի Տաղն Խրնից :

Վայլ 'ի բնութիւն՝ անտանելի ,
 Եւ ոչ աղօտ՝ միտըք ձգտի .
 Ո՛չ մարդկային՝ մաքրագունից ,
 Ո՛չ երկնայնոց՝ սեռին վեհից :
 Օր եթէ է՝ գոլ հաւատամք ,
 Հայց թէ զինչ է՝ անդիտանամք .
 'Ի յառաջինն՝ իմաստ փութամք ,
 Եւ յերկրորդէն՝ յոյժ վերջանամք :

Արքյառաւել՝ ըն նկրտին,

Առ ՚ի նուազ՝ ըն տկարանան.

Եւ որք չափով՝ վերաբերին,

Գեր քան ըզափի՝ ըն վերանան:

Խոսպով:

Օ ի հրահանգից՝ Ա արժարանի,

Սեմ տակաւին՝ ներկուու բանի.

Յաթենական՝ ըն քաղաքի,

Օ անձն իմաստիւք՝ ոչ կըթեցի:

Աւր Լ սարան՝ Պղատօնի,

Եւ չափ ոտիւք՝ Հոմերովնի.

Աւր ստորոգողն՝ Արիստոտել,

Տասըն բանիւ՝ դրողն էի:

Աւր հոյլք ամէն՝ Հրոետորի,

Ժողովարան՝ Դարտասանի.

Երհմատութիւն՝ Վերականի,

Իայի քերթում՝ ըն Վերթողի:

Օ որըս գիտել՝ նախ պատշաճի,

Եւ աստ ապա՝ ձեռնարկելի:

Յառաջաբան. Ա իդասան. Նախնեաց:

Արեգակն արդար՝ զհուք սիրոյ ծագեալ,

զանհաւատութեան՝ սառըն մեղաց հալեալ:

Բանաւոր ծառոց՝ Երեւեցան ծաղիկք, Երփ-

նազարդ գունով՝ անուշահոտ բուրմամք:

Դարուն հաւատոյ՝ դալարացոյց զհոդիս, դօ-

սացեալ տնկոց՝ կանաչացան սաղարթք:

Դրախտին Աղինայ՝ ծառք բազմացան յերկ-

րի, ՚ի տանն Աստուծոյ՝ արմաւենիք տըն-

կեալք:

Երկնից լուսաւորքն՝ իջեալ շրջին ընդ մեզ,

և աստեղք պայծառք՝ համարնակիցք

մարդկան:

Օօրք անմարմնականք՝ զուարձացեալ տօնեն, մարմնաւոր զօրաց՝ համադասեալ նոցունց։ Տաշ ամենայն Արբոց։

Հանձարեղ՝ չնորհալիդ՝ ընտրեալ է ,
Յարքայից՝ հրզօրաց՝ զարմէ է .
Աւեղ պարգև՝ ի տաննեն՝ լ ատիննէ ,
Նըրեշտակ՝ հրաշագեղ՝ հռիփսիմէ :
Աւահահօրդ՝ ուղեւոր՝ երկնընթաց ,
Ըրինաց՝ Երկնայնոյն՝ խորազգեաց .
Աւրացեալ զանձն և զփառս՝ հայրենեաց ,
Նըրեշտակ՝ հրաշագեղ՝ հռիփսիմէ :
Իմաստուն՝ սուրբը կուսան՝ գերյարգոյ ,
Նըրով իանին՝ ի յերկիր՝ արկելոյ ,
Առեցեր՝ ըզլապտեր՝ հաւատոյ .
Նըրեշտակ՝ հրաշագեղ՝ հռիփսիմէ :
Փեսային՝ Վրիստոսի՝ մարմնացեալ ,
Ինապակ՝ կուսութեամբ՝ հարսնացեալ ,
Յառագաստ՝ անմատոյց՝ բազմեցեալ .
Նըրեշտակ՝ հրաշագեղ՝ հռիփսիմէ :
Աիրասնունդ՝ Աիրամարգ՝ սըխրալի ,
Ալբրափայլ՝ ոսկեթել՝ տարփալի ,
Կոռապսակ՝ իւղագլուխ՝ ցանկալի .
Նըրեշտակ՝ հրաշագեղ՝ հռիփսիմէ :
Խսկաձեմ՝ Լզաւնի՝ օդապար ,
Աոր՝ Աոյեան՝ տապանն է՝ քոյդ գաղար .
Ըձասպան՝ Լբագիլ՝ դու արդար .
Նըրեշտակ՝ հրաշագեղ՝ հռիփսիմէ :
Ատաւոր՝ Աարտիրոս՝ մըրցական ,
Կական՝ իանին հօր՝ զօրութեսն ,
Քիակոխ՝ քաջութեամբ՝ ըզհընձան .
Նըրեշտակ՝ հրաշագեղ՝ հռիփսիմէ :

Դունեղ՝ թաթաւեալ՝ 'ի բոսոր,
Վաղարթուն՝ կարմրորակ՝ իբր խընձոր,
Հարսն ազնիւ՝ դու արեամք քօղաւոր.
Հըրեշտակ՝ հրաշագեղ՝ Հոխիսիմէ:

Տաղ Հոհեփսիմէայ:

Հանիւք դուզնաքեայ իմն խօսելով՝ 'ի լսե-
լիս խոհեմագունիդ և աստուածասիրի ան-
ձին՝ յաղագս մերոյ հաւատոյ, և կարդաց եկե-
ղեցւոյ՝ հարցմանցն որ 'ի ձէնջ, տալով պա-
տասխանի: Եւ քանզի խօսեցեալն իմաստք
շրթամբք՝ ոչ եւ բնաւորեալ՝ 'ի շտեմարանս
յիշողականին մնալ անծախապէս՝ զմոռացու-
թիւնն ունելով հակառակ, վասն որոյ ինդ-
բէք դրով արձանացուցանել զնոյնն յա-
ղագս անաղօտ մնալոյ առ ձեզ յիշատակ բա-
նիցն՝ որ 'ի մէնջ: Օ որ և տացուք սիրողա-
բար՝ սիրողիդ զիմաստութիւն՝ ըստ տխմար
դիտութեան մերոյ, և տկարութեան, և
ժամանու փութոյ՝ համառօտ և յայտնի բա-
նիւ. սակայն զբովանդակն պարագրելով
հաւատոյ մեր ճշմարտութիւն, և զեկեղեց-
ւոյ մեր կարդաւորութիւն՝ 'ի հարցն սրբոց
աւանդից ընկալեալ: Ուստի առ Ալէս հայր:

'Ի մօրդ իմաստութեան ստեանց ընկա-
լաք զցող կաթին՝ տղայական մտաց մեր յար-
բումն՝ փոքր բանիւ, և մեծագոյն իմաս-
տութեամք պարունակեալ ընդ դրով: Օ որ
արբեալ՝ զմայլեցաք ուրախութեամք, որ-
պէս և գինեաւ Հոգւոյն 'ի վերնատունն.
և յիշելով դուզնաքեայ այսու ճաշակմամք
զերբեմն մայրենի դրկացդ գգուումն սիրոյ,
և զփափկութեան կերակուլս իմաստից հոգ-

ւոց իւղոյ և մեղու՝ զոր բղխեր աւետեաց
 երկիրդ՝ վերին աշխարհին տիպ, խանդա-
 ղատեցաւ որ 'ի մեզ տիրականիս մասն՝ յի-
 շողական զօրութիւն, զնոյն առ 'ի յագումն
 դարձեալ փափագելով ստանալ ձնշակ զը-
 ւարթութեան, և քաղցրութեան. որպէս
 երբեմն յայսոսիկ իրս լինելով Դաւիթ՝ ա-
 սէր առ Աստուած. Ոիշեցի ես զաւուրսն
 զառաջինսն. յայտ է՝ զի զԱստուածատունկ
 Դաւախտին զվայելս, և զանտխրական ոգ-
 ւոց փափկութիւնսն : Եւ մեր ըստ նմին յի-
 շելով զտուեալն յԱստուածոյ խաղաղութիւն
 Եկեղեցւոյ յաւուրս Հարցն մերոց սրբոց՝
 ըղձանամք զնոյն վերստին տեսանել և կրել.
 մինչ մի հոգի հեղեալ էր յամենեսին 'ի վե-
 րուստ, և ոչ յայլեայլս բաժանեալ յօտա-
 րոտի հոգւոց մնարութեանց . ոմն ասելով
 Պաւղոսի, և ոմն Ապողոսի, կամ Աւեփայի,
 կամ այլ ուրուք 'ի պաշտօնեից . այլ՝ Վրիս-
 տոսի ամենեքեան : Օ յայսոսիկ ողջախոհու-
 թեան բոց՝ որ 'ի մեզ փոքու նշուլիւք վա-
 ռումն, բորբոքեաց աստուածային բանից
 ձեր հոգեւորական հողմ՝ որպէս դարբնա-
 կան փքովք զկայծակունս արծարծանելով՝
 'ի դործ պատրաստեն ենթակային իրի լի-
 նել պիտանացու : Որում և մերս կամք և
 յօժարութիւն՝ ոչ խիստ և անգործ, և ոչ
 առ 'ի յոյժ տաժանումն հնարագիտաց ար-
 հեսաին, այլ դիւրալուր և հաւանական ձըշ-
 մարտութեանն բանի 'ի ձմարտասիրաց .
 ըստ կուսին երկրորդի ունկնդրութեան բար-
 ւոյն՝ յորմէ կեանք, և ոչ ըստ կուսին ա-

ուաջնոյ հաւանութեան չարին՝ որով մահ։
 «Վանզի սիրելի էր մեր այս խաղաղութիւն՝ի
 մանկութենէ . որոյ և հասանել ըղձանայաք,
 մանաւանդ՝ յորժամ տեսանէաք , 'ի պատա-
 հել միմեանց ձեր և մերս իմաստնոց՝ ոչ ար-
 տաքոյ ուղղափառաց Ա արդապետացն խօսե-
 լով երկաքանչիւր կողմանցն զբանսն . որոց
 պիտանացու էր միայն զօդ կատարմանն ,
 ուրն՝ մայրն խաղաղութեան . այլ ո՛չ ճար-
 տարութիւն բանից՝ ունայնացուցիչ Խաչին
 «Քրիստոսի՝ ըստ Ա.ուաքելոյ : Ա.յլ զայս մե-
 ծագոյն իր , և Ա.ստուածային գործ՝ ամ-
 բարեալ պահելը յաւաջատեսութիւնն Ա.ս-
 տուծոյ ձերում արժանաւոր Արբութեանդ։
 «Օ որ և ծանոյց իսկ գրաւորական ձեր բան՝
 բազմապատիկս ունելով գովեստ խաղաղու-
 թեան յաստուածայնոցն բանից , Որոց և
 բացեալ առ լսողութիւն թովչիդ ճարտարի
 զականջս սրախից՝ ընկալաք յոդիս , 'ի նոյն
 իսկ գործարանի թագուցեալ զբանս ձեր՝
 յոր և Դաւիթ վլ.ստուածայինն : «Վան-
 զի գիտելի է իմաստնոց՝ զի ճշմարիտ խա-
 ղաղութեանն ոչինչ է զուգահաւասար յէիցս
 բարեաց : Ա ամս որոյ և աւանդեալն եկե-
 ղեցւոյ պատուիրան՝ զվերինն քարոզէ միշտ
 հայցել յլ.ստուծոյ , տալ զխաղաղութիւն
 երկնայինն : «Օ սոյն յայտ առնէ և Տէրունա-
 կանն՝ որ յաղագս աղօթից բան , գալ Ա.բ-
 քայութեանն Ա.ստուծոյ 'ի մեզ . որ է տի-
 բապէս խաղաղութիւն . և լինել հածու-
 թեան կամաց նորա յերկրաւորք՝ որպէս
 և յերկնայինսն . յորս է բնաւորեալ ընդ

բիւրուց բարեացն ունակութեանց՝ և սիրոյ
և խաղաղութեան պառող, որ է յաւէտ և
անփոփոխելի : Ուստի առ ԱՌԵՒՅԵԼ Պարբերութէ
Քունաց :

ՆԵՐՍԻՍ ԼԱՄԲՐՈՆԵՑԻ, NIERSSES LAMPRONENSIS.

in the twelfth Century.

Եւ զայս խանդակաթ սիրովն ընդ մի-
մեանս ՚ի ձանապարհին՝ հասին մերձ ՚ի Շե-
թանիա : Յայնժամ համբարձեալ զձեռո
իւր՝ օրհնեաց զնոսա . և անդէն փութա-
պէս մեկնեալ՝ սկսաւ վերանալ յերկինս :
Խակ նոքա սրտաթափ յուսակառուր խոնար-
հեալ, զերկիր համբուրեալ՝ չնորհ ունելով
օրհնութեանն , յարուցեալ փութապէս , և
երադ պշուցեալ՝ նայեին ընդ երկինս ՚ի յեր-
թալն նորա : Եւ ձայնեին առ միմեանս .
զի՞նչ էր պատահմունս , ո՞րպէս ընդ յայտ-
նելն զրպիսութիւն փառաց իւրոց՝ գտաւ
փափաքելին ՚ի մէնջ վերացեալ : Եթե զմի
օր համարեալ է մեզ ժամանակն՝ յորս տղի-
տութեամբ շրջեցաք ընդ նմա . ահա եկն
օրն՝ յորս ցանկամք տեսանել մի յաւուրց
քոց , ո՞վ որդի Աստուծոյ և մարդոյ , և ոչ
տեսանեմք թշուառական աշակերտքս : Եւ
ապա յիշեալ ոմն զգեղոյն վայելութիւն՝
յոգւոց ելանէր : Այլ ոմն զբանիցն քաղց-
րութիւն , և ինքն ընդ անձին իւրում ոգո-
րէր : Աիւսն զարքարանսն՝ զոր կրեաց ան-
պարտ , և ՚ի յիշատակնորին հեծեծէր : Ոմն

զըուելն ընդ Երկինս՝ աղօտակնարկեալ՝ ձեռամբ մատուցեալ ընկերին իւրում ցուցանէր : Եւ որչափ նա բարձրացեալ՝ 'ի բացեայ 'ի ստորնայնոցս լիներ, սոցայածնիունեղեալ՝ 'ի նկատելն՝ աղետ սիրոյն տուքորէր : Եւ զի Ելք փափաքանացն ընդ մարդկային հնարս արտաքս Ելանէր, միայն զանթարթափափ պշնուլն աչօք՝ իւրաքանչիւր ոք սփոփանս անձին համարէր : Եթէ միւսն լրքանէր 'ի տեսութենէն, յորժամ ընկերն վերստին զնոյն նմա նշանակեալ ցուցանէր, որպէս յանմահութիւն ուրախութեամբն փոխէր : Ունէ այլ ոք ձկտեալ կորովի բբօք ըզչուել նորա նշանարէր, ամենեցուն աչք ընդ նմին յուսով յուղերձէր : Վաղցը էր նոցա պշնուլն ընդ Երկինս ընդ Երկար ժամանակ, թէ ոչ ամսն 'ի ստորև մնացեալ՝ զգեր 'ի վերոյ Ելեալն ծածկէր : 'Ի Ճառա հարչնան :

Օ ի որք Երեկ և այսօր արք Գալիլեացէք գուեհիկը և շնականք՝ ահա ասեն, իբրև զիմաստուն Հելլենացիս ճարտարաքանեն . և այլք 'ի Պարթեական տարաշխարհիկ բարբառս նոցա պատախանեն : Պետրոս՝ որ 'ի Լափառնառում մնեալ, լսեմք՝ զի ընդ Հոռվմայեցւոց լեզուն խրոխտալով արշաւէ, Եւ Փիլիպպոս՝ որ 'ի Ծեթսայիդա Գալիլեացւոց, Արաբացւոց բարբառովն զիսօսս իւր յօդէ : Յովհաննէս՝ որ 'ի Վաղարէթ սնեալ, զիարդ Ալիլիկեցւոց ձայնիւն զմեզ հարցանէ : Եւ Յառվմասու սոքա լսեն՝ որ յԵթովպացւոց լեզու զբանս Արգարէից

յիշեցուցանե՛ : Ոժադե՛ռն այն տիսմար՝ տե-
սէք, որքան վայելուչ Վեծաց Հայոց բա-
ռիւքն զբանս իւր յօդե՛ : Եւ Շարդողիմէռ
մանուկ՝ իբր թե՛ ՚ի Վարս ծնեալ, զնոցին
խօսսն հնչեցուցանե՛ : Ով սքանչելեացս .
՚ի զանազան գաւառո ծնաք, և աշխատու-
թեամբ ՚ի բարբառս նոցին վարժեցաք, և
ահա սոքին՝ որք ոչ տեսին զայն քաղաքս,
անաշխատ զնոցին ձայնս հնչեն : Վեծ է
ասեն՝ արուեստ սքանչելեացս . և թե՛ առ-
ինչ ունի աւարտել, ոչ կարեւմք նկատել:
¶ Դ'առան Հոգեգալստէան :

ՍԵՐԳԻՒՄ ԱԾՐԴԱՊԵՏ, SERGIUS DOCTOR.

in the twelfth Century.

Եպ այսպիսիքս ոչ միայն ՚ի գըոցն զըր-
կեալ գտանին ՚ի գիտութենե՛ , այլև այլոց
՚ի նոյն պարապելոց դառն դատաւոր և հա-
ւաստի քննիչ բանից և բառից լինին , ոչ յօ-
գուտն հայելով , այլ զկարգ բանիցն գիտե-
լով : Որք եթե սղագունիցն հանդիպիցին
բանից , զերկայնն և զբաղմաբանն ՚ի գո-
վութիւն առնուն . և թե՛ երկայնագունիցն
լինին լսող , և որ օրինակօքն է լցեալ, ըզ-
նուազն բարւոք վարկանին և զօրաւորս :
՚ի մանապէս յորժամ պարզ բառից հանդի-
պին , և ձկնորսացն խօսից , զնուրբն և ըզ-
մանուածոյն և զբաղմաբանդակն գովին :
Եւ դարձեալ ընդդէմ նմին՝ զդիւրալուրն

և զառանց խոր բառիցն յարդեն և մեծարեն : ՚Ի մենաւեան լովեաց կամաւշիւայց :

ԻԳՆԱՏԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ, IGNACE DOCTOR,

in the twelfth Century.

Առուլ զայս իմաստ Ռատուածային քռ
ըղձից պարտ համարեցայ ով Գրիգորիոս,
քահանայապետական գլուխ , և սիւն հաս-
տատութեան Երկեղեցւոյ : — Այսայն՝ ու-
նիմք առ այս և զհակառակորդացն զբանսն,
որ ոչ սակաւս տան ամբոխումն խորհրդոցն՝
որ ՚ի մեզն , շարժման : Քանզի է նոցա առ
ամենայն բան զներհակն մերձ դնել : Եթէ
Երկայնագունից հանդիպին բանից , գովեն
փոքու հասանել և անցանել : Խոկ եթէ սուզ
իցէ բանն , իբրու ոչ պարունակող զիմաստս,
և ոչ բաւականապէս տալ զցոյցս՝ պարսա-
ւեալ լինի : Դարձեալ առ այս՝ եթէ նրբա-
գոյնս ինչ ունիցի , զպարզն առաջի դնեն իբ-
րև դիւրահասս , վասն այնորիկ և օդտա-
կարս : Ռապա եթէ պարզագոյն իցէ , գովե-
լի է նոցա իմաստասիրացն եղանակ բանից
իբրև զօրաւորս և արուեստականս : Ռաբ՝
այսչափ է նոցա դատելն . ոչ վասն առաջի-
կայ իրին , այլ միայն՝ զի ընտրողս և ձանա-
բողս ցուցեալ լինիցին : Խոկ մեզ զի լիցի
զանձինս անըմբունելի ունել ՚ի նոցա կար-
ձեացն , որքան ունիմք ուղղել զմիջինն այ-
սոցիկ տեսութեանց ընտրեսցուք զբանն . ոչ
յոյժ ամփոփել , և ոչ կարի երկայնել :

Դարձեալ՝ մի ՚ի ծածկելն փութալ, սա
կայն ՚ի գեղջկացն հետագոյնս դնել նուաստ
բանից : Եւ յաղագս այսոցիկ այսչափ : ՚Ի
մենականանին Առեւարանին ՚Ի ուժասու :

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ, GREGORY DOCTOR.

in the twelfth Century.

Եւ ոչ միայն յայսպիսի հրաշազան և զար-
մանագործ տեսութենէ (արարածոց) իմաս-
տաբար հայեցողքն զՄ ստուած փառաւո-
րեն, այլև յայնց տեսութեանց՝ որ յոլովից
թուի թէ պատճառք չարի են. զի որ ընդ-
մարմնոյ ական և զհոգւոյն աչս բաց ունին,
յայնցանե՝ յորոց կուրացեալքն հոգւով վնա-
սին, նոքա մեծամեծ շահին : ՚Ստ նմանու-
թեան բժշկաց, որ բազում անգամ՝ ի վնա-
սակարացն՝ զօգտակար դեղնն առնուն . որ
պէս յօձից առնուն զլուծիւս թունից նորա,
և յայլ մահացու դեղոց՝ զսատակէական զօ-
րութիւնս : Եւ եթէ ախորժեք, յեղելոց
՚ի գրելոց իրաց ստուգեցից զասացեալս :
Վանզի պոռնիկ ոմն հռչակելի դեղեցկու-
թեամբ յՄ նտիոք քաղաքի՝ անուն Պիեղա-
ղիս, որ ոչ միայն ՚ի քաղաքին, այլև յամե-
նայն աշխարհն մերձակայ՝ տարածեալ էր
համբաւ գեղոյ նորա . որ և յամենայն կող-
մանց վավաշոտ երիտասարդք դային առ նա :
՚Իս յաւուր միում ելեալ ՚ի բաղանեաց՝ և
զդեցեաւ բեհեզդ և ծիրանիս, և զարդա-
րեալ ոսկւով և քարամբք պատուականօք

զդլուխն և զլանջսն և զպարանոց , և գրեթէ զամենայն մասունս մարմնոյն . և սեռը թեամբ աչացն , և 'ի սպիտակէ և 'ի կարմրոյ զայտսն . և օծեալ անուշահոտ իւղով՝ գայլը անցանէր լկտի կերպարանօք ընդ մէջ քաղաքին՝ 'ի բազմաց յայնոսիկ հեշտացելոց սպասաւորեալ : Խսկ Խալիսկոպոս ոմն 'Առնոս անուն նստէր եկեղեցականօքն հանդերձ 'ի սրահ եկեղեցւոյն՝ ընդ որ անցանէր պոռնիկն . յորմէ բազումք յողջախոհ ժառանդաւորացն դարձուցանէին զդէմն 'ի տեսութենէն : Խսկ սուրբ Խալիսկոպոսն՝ յար պշուցեալ հայէր ընդ նա . մինչ զի և բազումք 'ի տեսողացն՝ 'ի միտս իւրեանց բամբասէին զնա , եթէ ընդ երկար նայի ընդ գեղ պոռնիկն : Խսկ նա յանկարձակի յարտասուս ցընդէալ՝ լայր դառնապէս . իսկ մերձակայքն որք բամբասէին զհայեցուածս նորա՝ մատուցեալ հարցանէին , թէ զի՞նչ էր պըշնունըն ընդ գեղ պոռնիկն , և զի՞նչ ողբումն : Խսկ նա տակաւին արտասուելով պատասխանէր : Ա այ ինձ որդեակիք . վասն զի տեսի զկինն զայն՝ զի ամենայն հնարինք , պէսպէս և զանազան զարդուք զարդարեալ էր զինքն՝ որչափ և էր կարողութիւն . և այն վասն մոլեկան և մեղաւոր երիասարդացն՝ զի նոցա հաճոյ երևեսցի , և զախատաւոր ցանկութիւնն նոցա շարժեսցէ՝ 'ի տուփումն ինքեան : Խսկ ես երկնաւոր փեսային եմ՝ հարսնացեալ . որ վասն անձառ սիրոյն իւրոյ որ յիս՝ յանբաւ բարձրութենէ գերակայ փառացն խռնարհեցաւ յիմ դարշութիւնս ,

և խայիւ և արեամբ գնեաց 'ի ծառայութենէ, մեղաց, և սրբարար աւազանաւն լրաց, և հոգւոյն շնորհօք զարդարեաց, և զգեղեցկացուցիչ պատուիրանս իւր ետ և ուսոյց, եթէ զիարդ նոքօք օրըստօրէ զարդարեցից զամենայն մասունս հոգւոյ և մարմնոյ իմոյ, որով անձառելի սիրով նայիս բընակեսցէ, և ես 'ի նմա: Խակ ես ըստ առակողին՝ 'ի փոխածն անդրէն դարձայ, և ընդտիղմն թաւալեցայ՝ յորմէ լուացայ. և զնորհին զարդարանսն որ 'ի նմանէ առի, մեղօք աղտեղացուցի. և ոչ փութացայ վերստին ապաշխարութեան ջրով լուանալ զանձն իմ, և պատուիրանին պահպանութեսմբ զարդարել զի հաճոյ դտայց երկնաւոր փեսային, որ սիրեայն զիս, և զանձն իւր 'ի մահմատնեաց վասն իմ. և կամ՝ զի ես ոչ այնքան ցանկամ հաճոյանալ Աստուծոյ, որքան նա աշխարհի, և կամացն սատանայի: Խւ լուեալ զայս՝ զարմացան ընդ արթնութիւն մոտաց նորա, և ընդ անսիստութիւն հոգւոյն, և փառաւորեցին զԱստուծած: Տեսանես ահա, զի փոյթքն և արթունքն՝ և 'ի վխասակարացն շահին. բայց ծոյլքն և մեղկքն՝ բաղում անդամ վխասին և յօգտակարացն: Բռն վասն ուղիղ հաւատոյ:

ՄԻՒՒԹԱԾ ԳՈՅ, MEKITAR COSH.

in the twelfth Century.

¶ մէջ տնկոց խորհուրդ եղեւ՝ թէ ում
արժան է թագաւորել՝ ի վերայ մեր. և ո-
մանց ասացեալ զարմաւենի՝ թէ բարձր է
հասակաւ, և քաղցը է պտղովք։ Խակ որ-
թոյ հակառակեալ՝ ասէ. Ես եմ ուրախա-
րարն, ինձ արժան է լինել։ Խակ թղենի՝
թէ ես՝ զի քաղցրաճաշակ եմ։ Խակ դժնիկ՝
թէ ես հարկանող եմ, ինձ ՚ի դեպ է։ Եւ
առսւելութեամբ իւրաքանչիւր զանձն յար-
գեր, և անկարօտ ասէր այլոց։ Խակ արմու-
ւենի խոկացեալ դիտաց՝ եթէ ոչ հաւանին
նոցա թագաւորել, զի զայլս ընդ իւրեանց
ոչ կամէին Ճոխանալ, և ասաց՝ թէ յաւետ
ինձ վայել է լինել արքայ. և ամենեքին վո-
կայեցին և ասեն. բարձր ես հասակաւ, և
քաղցը պղտով. բայց երկու ինչ պակաս է
քեզ, զի յաւուրս մեր ոչ տաս պտուղ, և ՚ի
շնուռած ոչ պատշաճիս. մանաւանդ զի բարձ-
րութեամբ քո՝ անճաշակ բազմաց լինիս։
Եւ նա պատասխանեաց, թէ զձեզ իշխանս
կարդելով՝ այնպէս թագաւորեմ. և ՚ի կա-
տարեալ ժամանակացն իմոց՝ և որդւոց ձե-
րոց թագաւորեցից։ Եւ յօրինեաց զկարգ
թագաւորութեանն՝ յանձն առնելով նոցա
զորթ՝ դինեպետ, և զթղենի՝ հիպատոս,
զդժնիկ՝ դաշճապետ, և զնոնենի՝ բժշկա-

պետ, և զայըս 'ի պարզոց 'ի դարմանս . ըդ-
մայըրս՝ 'ի շինուածս , զանտառս՝ յայըրումն ,
զմորենի՝ 'ի բանտ , և զիւրաքանչիւր յիւրա-
քանչիւր դործ : - Յանդիման կացուցանէ
առակս , թէ ոչ ոք կարէ ձոխանալ առանց
անփառից , և ոչ բարձրանալ առանց անար-
դից : Եւ դարձեալ՝ առ ձեռն պարգեօք
ակն ունին անազան յուսոյ բազումք տերանց
իւրեանց : 'Ի Գիրս Առաջաց . Է :

(Ըագաւոր ոմն ետես տեսիլ , զի իրը և
զանձրե իջանէր աղուես . և քարող հրամայ-
եաց կարդալ , եթէ ոք զիմս մեկնեսցէ տե-
սիլ , հազար տաց դահէկան : Եւ լուեալ
այր ոմն աղքատ , և երթեալ՝ առէ , եթէ
երիս աւուրս տացես ինձ ներումն , և յայտ-
նեցից քեզ : Եւ ելեալ յանապատ՝ շրջեր
խոկալով : Եւ եր անդ վիշապ . և ետես
զայըն տարակուսեալ . ասէ , զի՞նչ ինձ տա-
ցես , եթէ զտեսիլն յայտնեցից քեզ զթա-
գաւորին : Եւ նա ասէ . զօր ինչ խոստացաւ
թագաւորն , կէսն քեզ եղիցի : Ասէ վի-
շապն , երթ և ասա՛ , թէ ժամանակ է այ-
սուհետեւ , զի մարդիկն նենգաւորք եղիցին
և խարեբայք՝ իրը զաղուես : Եւ երթեալ
ասաց . և հաճոյ թուեցաւ առացեալն , զի
նման այնմ էին և մարդիկն : Եւ ետ զհա-
զար խոստացեալ դահէկանսն . և այրն սը-
սեաց վիշապին , և ոչ դարձաւ անդրէն առ-
նա : Եւ զկնի դարձեալ՝ այլ ետես տեսիլ ,
զի իրը զանձրե իջանէր ոչխար . և հրա-
մայեաց կոչել զայըն , զի նման առաջնոյն
մեկնեսցէ : Եւ նորա զնոյն խնդրեալ նե-

բումն՝ և ամաչեր իբրև զապերախտ երթալ
 առ վիշապն։ Եւ գնաց զանձն պարտաւու
 րելով՝ ասէ, մեղայ քեզ յայտնեա՛ զերկ-
 րորդս, և տաց քեզ զառաջին և զերկրորդս։
 Եւ մեկնեաց նմա, ոչ յիշելով զյանցումն։
 և ասէ. Երթ և ասա՛, թէ ժամանակ դայ,
 և եկեալ է՝ զի մարդիկ իբրև զոչխարս պար-
 զամիտք իցեն։ Եւ երթեալ մեկնեաց։ և
 այնմ հաւանեալ ետ նմա հազար ևս դաշե-
 կան։ Եւ առեալ առն՝ տարաւ վիշապին՝
 ընդ առաջին և ընդ վերջինն՝ հազար դա-
 շեկան։ Օ կնի այսորիկ՝ դարձեալ այլ ևս
 ետես տեսիլ, և ահա իբրև զանձրև իջա-
 ներ սուսեր. և հրամայեաց դարձեալ զայրն
 կոչել, զի և զայն ևս մեկնեսցէ։ Եւ առն
 զնոյն խնդրեալ ժամանակ, և երթեալ առ-
 վիշապն. և նա առժամայն մեկնեալ իբրև
 բարեկամի՝ ասէ. Երթ և ասա՛, թէ ժամա-
 նակ է՝ զի մարդիկ յարիցեն բռնաւորք և
 սուսերաւորք։ Եւ եկեալ պատմեաց թա-
 գաւորին, և էառ զհազար դաշեկանն։ Եւ
 եւ գնաց առ վիշապն. և ասէ 'ի մարի՝ թէ
 ընդէր այժմ թողից վիշապիս զհազար դա-
 շեկանս, և կամ զհինդ հարիւր այլ ևս
 բերից. այլ հարից զվիշապս, և սատակե-
 ցից։ Եւ ջանաց հարկանել զվիշապն, և ոչ
 յաջողեցաւ նմա, զի խոյս ետ նմա վիշապն։
 Եւ այրն զդջացեալ և խորհեր, թէ չարիս
 գործեցի. զի թէ այլ ևս հարկ հասանիցէ,
 որպէս եկից առ սա։ Եւ տեսեալ վիշապին
 զայրն ստրջացեալ ասաց նմա. այր դու՛ մի
 տրտմիր, զի ոչ յանձնէ ինչ արարեր, այլ

'ի բերման ժամանակէ . զի ստելն քո' 'ի կեղծաւորաց ժամանակն , և զղջանալն , և տալն զհազար դաշեկանն՝ 'ի միամտաց ժամանակն , և հարկանելն զիս' 'ի ըռնաւորաց ժամանակն : Առաջի Ճ :

Հրաման ել 'ի թագաւորէն կենդանեաց յամաքայնոց՝ գալ առ նա ամենեցուն . և անյապաղ ամենեցուն ժողովեալ եկին : Խսկ քարաթաւշ և մողէզ և խլուրդ՝ եկին և նոքա առնուլ պարգևս . զի այնորիկ աղւա գաւ կուլը , զի ըստ իւրաքանչիւրոցն պատուիցէ : Եւ ծաղը ամենեքեան առնեին . և մեծարեաց զամենեսեան ըստ կարգի իւրեանց : Եհարց և զնոսա , եթէ զի՞նչ սպասինձ ունիցիք , զի պատիւ յինեն առջիք : Վարաթաւշ և մողէզ ասեն . քարամուտ եմք , 'ի բերդս թշնամեաց Տեառնդ մերոյ մտանեմք , թէ յաղթել ոչ կարեմք՝ զօրս անդ հանեմք . իսկ խլուրդ ասաց , թէ 'ի քաղաքս մտանեմք՝ ական հատանելով : Եւ այսմ հաւանեալ՝ պատուեաց և զնոսա զքամնհեալսն 'ի բազմաց : Առաջի ՃՃ :

Օքոյն մրջեան՝ արջ փորէր , և լեզուաւ ժողովէր և ուտէր : Եւ հնարի մրջիւն ստակել զնա . երթեալ առ պիծակ , և գուեխ , և մթեխ , և շանաձանճ , և բրէտ , և առ նմանք սոցին՝ և աղաչէ օդնել իբր աղգայինք : Հաւակցեն . հարկանեն զաւս և զաելիս արջունն : Եւ հարկանէ գլուխ զքարի , և նեխի , և որդունք ևս ծնանին . և 'ի սաստկութենէ ցաւոց զբերան բացեալ՝ գուլը : Եւ նոցա մտեալ յորովայնն՝ խոցոտեն

զաղիսն . և նեղեալ՝ գիմէ 'ի հոսանս ջրոյ .
և անշափի 'ի ներքս մտեալ՝ հեղձանի ,
Վարդէ ճծդ :

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ, VARDANUS DOCTOR .

in the thirteenth Century.

Սուրբն Առեսրոպ յօրիներ դպրութիւն
Հայերէն : Վասաներկու գիր առ Դա-
նիէլի Ասորոյ գտեալ 'ի հին ժամանակաց ,
որ վասն ոչ պարզելոյն զընդարձակութիւն
լեզուիս , անհոգացեալ եղել յառաջնոցն՝
Յոյն , և Ասորի , և Պարսիկ գրով շատա-
ցեալք : Եւ Առեսրոպ ոչ կարէր նոքօք փո-
խել զԱստուածաշունչ գիրս 'ի Հայ բար-
բառն . վասն որոյ աղօթից տուեալ զանձն՝
գործակցութեամբ սրբոյն Աահակայ , տայ
նմա Աստուած չորեքտասան գիրս՝ աջով
իւրով գրոշմեալ առաջի նորա , որպէս և մե-
ծին Առվուսի 'ի լեառն Աինայ , և սմա 'ի
լեառն Բալուայ . որպէս տակաւին ցուցա-
նի գրոշմն Աստուածագիծ վիմին , և նկարք
գրերուն . և պատուի տեղին ինսկովք և ջա-
հիւք միշտ 'ի Տաճկաց , և 'ի Վրիստոնէից
բնակչաց տեղւոյն : Եւ զի լեալ է գիր հին
Ակայութեանց Հայերէն , 'ի ժամանակա-
լեռնի արքայի զի գտաւ դրամ 'ի Աիլիկիա՝
Հայերէն գրով գրոշմեալ զանունն կռա-
ղաշտ թագաւորաց Հայկազանց : Օորոց
զթերութիւնն ելից նորս մեր Եղբաս՝ առա-

ուածախառն շնորհօք լցեալ, նորոդիչ նորոյս Խարայէլի, և կարգաւորիչ։ Պատճռաւուն հայոց։

ՅՈՒՆԱՆ ԵՐԶԵԿԱՑԻ, JOHN ERZENGANSIS.

in the fourteenth Century.

Կ Երապատիւ և գԵրահռչակ Հայրն մեր
ըստ հոգւոյ, և Երկրորդ լուսաւորիչ սուբք
Եղեղեցւոյ, 'ի զարմէ և 'ի շնորհէ սրբոյն
Գրիգորի փայլեալ՝ կորովամիտ և համեզա-
բան կաթուղիկոսն Հայոց՝ Տէր Կերսէս
Կվայեցի, աշխատեալ վերլուծութեամբ ՚ի
սկիզբն սրբոյ Վւետարանիս՝ գեղեցիկ և
հանձարեղ բանիւ, և դադարեալ վարդա-
պետութիւն նորա ՚ի մուտս վարդապետու-
թեան Փրկչին յայսմ վայրի։ ոչ գիտելով՝
Եթէ ոյր աղադաւ եղեւ խափանեալ։ Ո ասն
որոյ՝ յոյժ ՚ի վարանս մտեալ տագնապէի։
Օ ի թէ նա ՚ի խնդրոյ եղբօր իւրոյ՝ Գրի-
գորի վերադիտողի Հայրապետական աթո-
ռոյն, գրեաց զմեկնութիւնն՝ որսկէս պատ-
մի ՚ի սկիզբն նախերդութեան նորին, և
ինքն իսկ յետոյ յաջորդեաց զաթոռ կաթոռ կաթու-
ղիկոսութեան ամս եօթն, ապա ընդէլը ե-
ղեւթերի մնացեալ Վստուածային գործոյս
այսորիկ գործառնութիւն։ Եւ յոյժ Շե-
տաքրքիր եղեալ՝ 'ի ստոյդ պատճառէ հաս-
մանն վրապէցի։ Վանզի ոմննք զմահն ա-
սացին խափանումն։ և այլք զհոդ Հայրա-
պետական աթոռոյն։ և կեսք թէ՝ գրեաց,

և չե՞ի միջի : Բայց սոքա ինձ ոչ եղեն հա-
 ւանելի : Եւ թէպէտ ոմանք նախ քան զմեղ
 ձեռնարկեցին գրեալ 'ի վերայ շարագրու-
 թեան նորին , սակայն ոչ էր կարգաւոր՝ որ-
 պէս Արբոյն . այլ հատակոտոր արարեալ
 զանանս առաջին Ա'եկնչաց . նաև զբնաբա-
 նութիւն Ա'ետարանին արտաքս մերժեալ .
 ուստի ոչ գայը դիւրաւ յիմացումն ընթեր-
 ցողացն : Հաղագս որոյ՝ ես նուաստս 'ի
 Վրիստոս , և յետինս յորդիս Աիօնի՝ ապի-
 կար ոգիս Հոովհան Երզնկացի՝ սպասաւոր
 բանի , ընակեալ 'ի վիճակ սուրբ Ա'ռաքե-
 լոյն Յագեռոսի՝ 'ի վանս Ծործորու կոչե-
 ցեալ , ընդ հովանեաւ սուրբ Ա'ստուածած-
 նիս . այլև ժողովեալ առ մեղ բանասէր ան-
 ձինք 'ի յուսումն կրթութեան . Ա'ստուածա-
 շունչ տառից լսելութեան . յորոց յորդոր-
 մանէ , և 'ի փափաքելի ինդրոյ՝ եդեալ 'ի
 մտի առնել հաւաքումն մեկնութեան որր-
 բոյ Ա'ետարանին Ա'ատթէի՝ Ըլով զթե-
 րի նորին ըստ կարողութեան իմում , շա-
 հեալ և օգտեալ յառաջին Արբոյն : Եւ է
 զի՝ 'ի ծագմանէ նշուլից շնորհաց վերոա-
 սացեալ առնեն Ա'ստուծոյ 'ի միտս մեր , դի-
 ցուք տեսութիւնս պիտանացուս յանցնիւք
 տեղի . խառնելով զնսեմատեսակ բանիցս
 տգեղութիւն՝ ընդ չքնաղագիւտ և լուսա-
 տեսակ իմաստիցն պայծառութիւն : Եւ ա-
 ւանդեցաք Ա'օր մերոյ Աիօնի փարթամու-
 թիւն , և որդւոցն նորին անխոնջ վաստա-
 կասիրաց՝ 'ի հրձուանս հոգեռոր խրախու-
 թեան , միանդամայն և յառատութիւն մը .

տաց և բանի . յաւելուած վարկանելով ըզ-
տաժանումն կաթի քրտանցս մերոց՝ առ ըն-
դարձակութիւն անդնդակական խորոց լայնու-
թեան . դիտելով՝ եթէ Պաւղոսի չորչէ
վարձս ըստ տնկելոյն , և Իպողոսի ըստ ո-
ռոգելոյն : Ա ասն որոյ աղաջեմ զԻստուա-
ծաբան ընթերցողսդ , և զվայելողսդ այս
փոքրատեսիլ և ընդին նուիրաց ընծայի՝ որ
'ի սուրբ Խկեղեցի . վստահութեանս մե-
րում ներողս լինել . և զսխալանս մեր՝ որ
աստ , 'ի բառս և 'ի տեսութիւնս , հարա-
զատ սիրով ուղղել : Քանզի ընաւորեալ է
սէր զբազմութիւն եղօր յանցանաց ծած-
կել . և զաշխատանս երկանց մերոց՝ ձեր օգ-
տելովն քաւել . և զմեզ հանդերձ մերովքն
ծնողօք հոգեորօք և մարմնաւորօք՝ 'ի Տե-
րունի բարիսն յիշատակել : Խւ արդ՝ եղե-
գըութիւն սորա 'ի թիւ Արդեղութեան
Տեառն մերոյ Հիսուսի Քրիստոսի 'ի հա-
զար երեք հարիւր և վեշտասան . որոյ զօ-
րութեամբն բուռն հարցուք զբանէս : Յա-
ռաջաբան Ա'ն . Ա'տբեէի :



INDEX



	Page.
<i>Grammar</i>	1.
<i>Alphabet</i>	2.
<i>Syllable</i>	4.
<i>Familiar Abbreviations</i>	5.
<i>Word</i>	6.
<i>Noun</i>	6.
<i>Declension</i>	12.
<i>Adjective</i>	23.
<i>Middle Nouns</i>	24.
<i>Pronoun</i>	50.
<i>Verb</i>	47.
<i>Participle</i>	52.
<i>Conjugations of the Verbs</i>	57.
<i>Conjugations of the Irregular Verbs</i>	79.
<i>Verbs Impersonal</i>	95.
<i>Preposition</i>	97.
<i>Adverb</i>	102.
<i>Conjunction</i>	112.
<i>Interjection</i>	114.
<i>Syntax</i>	115.
<i>Accents</i>	156.
<i>Punctuation</i>	157.
<i>The letters usud as the Numbers</i>	158.
<i>A Collection of Substantives</i>	159.
<i>A Collection of Verbs</i>	165.
<i>Exercises in the Armenian Language</i>	175.
<i>Select Pieces from the Armenian Writers</i>	215.

ERRATA,

CORRECTA.

Page. Line.

5.	9.	in stead	instead
9.	13.	an Abbes	an Abbess
10.	2.	percieved	perceived
44.	25.	¶nprw	¶nprw
81.	4.	thou putst	thou put'st
203.	25.	the royal of	the royal city of



60. 10

1931

100m. M. ♀

